

ՀԻՆ ՀԱՅԵՐԷՆԻ ՀՊԱՇՓԱԿԱՆՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ «ԿՈՎԿԱՍԵԱՆ» ՎԱՐԿԱԾԻ ՇՈՒՐՋ (պատմալեզուաբանական քննություն)

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ (vz.petrosyan@ysu.am)

ՄՈՒՏՔ

Դեռևս պատմահամեմատական հայերէնագիտության ձեաւորման սկզբնական փուլում՝ ԺԹ. դարավերջ-Ի. դարասկզբին, նրա երկու նշանաւոր ներկայացուցիչներ՝ Հայնրիխ Հիւբշմանը եւ Անտուան Մէլէն, հայերէնի հալաւիական հնչոյթներին՝ ջ [j], ճ [č], չ [č'], ձ [j], ծ [c], ց [c'], վերագրել են կովկասեան, մասնաւորապէս՝ քարթուէական ծագում: Ըստ Հայնրիխ Հիւբշմանի՝ «.... հայերէնը իր վրայ կրում է կովկասեան ազդեցութեան աչքի զարնող հետքեր, յարկապէս իր հնչիւնային համակարգում, որը վրացերէնի հետ գրեթէ լրիւ համընկնում է»¹ (ընդգծ. իմն է - Վ.Պ.): Իր *Les Dialectes Indo-Européens* աշխատութեան մէջ այդ միտքն աւելի որոշակի կրկնել է Մէլէն՝ հիմք ընդունելով առաւելապէս այն իրողութիւնը, որ հայերէնին եւ վրացերէնին բնորոշ են հպականների (= պայթականներ) եւ հալաւիականների (= կիսապայթականներ) նոյնական համակարգեր՝ «խուլերի, շնչեղ խուլերի եւ ձայնեղների եռակի շարքով»²: Հայերէնի հպական բաղաձայնների առաջացման հարցում կովկասեան լեզուների - այդ թւում՝ վրացերէնի - ազդեցութեան գործօնը, իհարկէ, բացառում է, որովհետեւ ակնյայտ են ընդհանուր հնդեւրոպական լեզուի եւ հ.-ե. հին լեզուների հետ հայերէնի հպականների համակարգային եւ ծագումնաբանական առնչութիւնները³: Կարծում ենք՝ տուեալ դէպքում Մէլէն նկատի ունի միայն հալաւիականները (*Esquissen*ում նա հին հայերէնի հալաւիականները քննում է հպականների հետ՝ իբրեւ դրանց տարատեսակ), որովհետեւ բուն հպականների ծագման առնչութեամբ նրա դատողութիւնները միանշանակ են. հին հայերէնի հպական բաղաձայնները, որպէս համակարգային իրողութիւն, սերում են հպականների հնդեւրոպական համակարգից⁴: Մէկ այլ աշխատանքում, վկայակոչելով հայերէնի եւ վրացերէնի հնչոյթային համակարգերի մեծ ընդհան-

¹ Հայնրիխ Հիւբշման, *Հայերէնի քերականութիւն*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2003, էջ 396 եւ յջրդ.:

² A. Meillet, *Les Dialectes Indo-Européens*, Փարիզ, Librairie de la Société de Linguistique de Paris, 1950, էջ 138 (էջ 95ի ծնագր.):

³ Վարդան Զ. Պետրոսեան, «Հպական բաղաձայնների հնդեւրոպական համակարգը», *ՎԷՄ*, 2019:2(66), էջ 107-36. նաեւ՝ Վարդան Պետրոսեան, «Հին հայերէնի ձայնեղ հպականների տարաժամանակեայ բնութագրերը», *Բանբեր Երեւանի Համալսարանի. հայագիտութիւն*, 2019:1(28), էջ 39-48:

⁴ A. Meillet, *Esquisse d'une Grammaire Comparée de l'arménien Classique*, Մխիթ. տապարան, Վիեննա, 1936, էջ 25-38:

րութիւնը, նա գրեթէ հայերէնին վերագրում է խառնածին բնոյթ՝ առանց այդ բառը գործածելու⁵: Հայերէնը խառնածին, ասելի ճիշտ՝ երկշերտ լեզու է համարել նաեւ Գրիգոր Ղափանցեանը⁶: Վերջինիս դէպքում դա կարելի է օրինաչափ համարել, եթէ նկատի ունենանք հայերէնի ծագման եւ բնոյթի վերաբերեալ նրա ինքնատիպ պատկերացումներն առհասարակ:

«ԿՈՎԿԱՍԵԱՆ» ՎԱՐԿԱԾՆ ԸՍՏ ՂԱՓԱՆՑԵԱՆԻ

Հայերէնի հալաշփականների առաջացման հարցում Ղափանցեանի պատկերացումներում առկայ է որոշ անհետեւողականութիւն. մի կողմից՝ նա հայերէնի սովաշչական (sibilant), այսինքն՝ ոչ միայն հալաշփական՝ ձ, ծ, ց, ց, ճ, չ, այլեւ՝ շփական՝ գ, ս, ժ, շ, հնչիւններով հարուստ բաղաձայնական համակարգի կազմաւորումը բացատրում է քարթուէլական լեզուների եւ բարբառների «անդրադարձով»⁷, այսինքն՝ ազդեցութեամբ, միւս կողմից, սակայն, այդ հնչոյթները եւս դիտարկում է «հայ լեզուի հնդեւրոպական նստուածքի (բաղկացութեան)» տեսանկիւնից⁸, այն դէպքում, երբ հայերէնին նա վերագրում է ասիանիկ ծագում⁹: Հայերէնում եւ կովկասեան ու սեմական հին լեզուներում, նրա կարծիքով, հալաշփական հնչիւնների՝ «որակական-ֆիզիոլոգիական եւ քանակական (տեւական) կողմերով» վաղ անցեալից եկող մերձատր կամ նոյնական բնոյթը, ընդհանուր լեզուական այլ բաղադրիչների առկայութեան պարագայում, **այդ լեզուների միջեւ ծագումնաբանական-պարմական առնչութիւնների վկայութիւն է** (ընդգծ. իմն է - Վ.Պ.): Այդ հնչիւնները բացակայում են հնդեւրոպական հին լեզուներում՝ «չխօսելով արդէն նրանց հոշակատր «նախալեզուի» մասին»¹⁰: Ըստ Ղափանցեանի. 1) հայերէնի եւ քարթուէլական լեզուների առնչութիւնները հասնում են մինչեւ Հայասա-Ազգիի գոյութեան ժամանակները (Ք.ա. Բ. հա-

⁵ Անտուան Մէլէ, «Հայերէն Լեզուն»՝ Հայագիտական ուսումնասիրութիւններ, ԵՊՀ հրատ., Երեւան, 1978, էջ 17-18:

⁶ Գ. Ա. Ղափանցեան, Հայոց լեզուի պարմութիւն. հին շրջան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1961, էջ 72:

⁷ Նոյն:

⁸ Նոյն, էջ 231-33:

⁹ Նոյն, էջ 40:

¹⁰ Գ. Ա. Капанцян, “К Происхождению Армянского Языка”, *Историко-Лингвистические Работы* (Հայոց լեզուի ծագման շուրջ, Պատմալեզուաբանական աշխատութիւններ), *հրդ.* 2, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1975, էջ 222: Ճիշտ է, որ ընդհանուրհնդեւրոպական լեզւում հալաշփականներ չեն վերականգնուում, բայց ճիշտ չէ, որ այդպիսիք չեն ունեցել նաեւ հին հնդեւրոպական լեզուները. սովաշչական հալաշփականներ ունեցել են *սարքմ* խմբի բոլոր հին լեզուները, դրանցով հարուստ էր, մասնաւորապէս, հին հնդկերէնը: Աւելին, հալաշփականներ ունէր նաեւ *կենքում* լեզուի հին յունարէնը:

զարամեակի կէսերը), 2) Հայասան հայկական հնագոյն պետական կազմաւորումն էր, եւ հայասցիները հայ ժողովրդի նախնիներն էին, 3) հայասցիների լեզուն «ասիանիկ», այն է՝ փոքրասիական բնիկ լեզուներից էր, ինչպէս եւ քարթուէլականները, շումերերէնը, աքադերէնը եւ այլ լեզուներ (խալիքների/խալիբների/, կարդուխների, տաոխների, փասիանների, սարամատացիների, մարերի/մարդերի եւն.)¹¹, որոնք յիշատակում են հին աշխարհի պատմագրութեան մէջ (Հերոդոտոս, Եւդոքսոս, Քսենոփոն, Ստրաբոն եւ ուրիշներ), բայց որոնցից շատերի մասին մարդկութեանը յայտնի չէ ոչինչ կամ շատ քիչ բան է յայտնի՝ դրանցով գրաւոր յուշարձանների բացակայութեան պատճառով, 4) հայերէնը «Հայասա-Ազգի ցեղադաշնակցութեան» կազմում կարող էր սերտ շփումների մէջ լինել, մասնաւորապէս, հիւսիսից իրեն սահմանակից «ասիանիկ» վրացերէնի հետ¹²: Ըստ այդմ, անուանի գիտնականը հայերէնում սովաշական հնչիւնների առաջացումը համարում է փոքրասիական, մասնաւորապէս՝ կովկասեան երեսոյթ, որպէս քարթուէլական լեզուների հետ հայերէնի եթէ ոչ՝ ծագումնաբանական ընդհանրութեան վկայութիւններից մէկը, ապա՝ առնուազն հայ ժողովրդի կազմաւորման փուլում այդ լեզուների՝ հայերէնի վրայ ունեցած ազդեցութեան արտայայտութիւններից մէկը: Ասուածի մասին է վկայում «կովկասեան հնչիւնական դրոպիւնից» իրանեան (հնդեւրոպական - Վ.Պ.) օսերէնի ազդուած լինելու մասին նրա միտքը¹³: Ընդ որում, ըստ Ղափանցեանի, հայ ժողովրդի կազմաւորման փուլում նրա մէջ ձուլուել են նաեւ ուրարտացիները¹⁴ (հմմտ. «... իսկ ալարոդները (= ուրարտացիները) մրան հայ ժողովրդի կազմութեան մէջ, բռնելով Այրարապը, այսինքն՝ ուրարտական ժամանակի նախկին ցեղամիութեան էթիունիի (էթիուիսիի) տեղը»¹⁵), հնարաւոր է՝ նաեւ

¹¹ Յայտնի է, որ վերջին երեքը իրանական ժողովուրդներ էին, հետեաբար նրանց լեզուն հնդեւրոպական էր:

¹² Ղափանցեան, *Հայոց լեզուի պատմութիւն*, էջ 69-77:

¹³ Նոյն, էջ 72:

¹⁴ Ինչպէս Ղափանցեանը, այնպէս էլ ուրիշներ «ուրարտացի» նշանակութեամբ գործածում են ե՛ւ «ալարոդ», ե՛ւ «խալդ» անուանումները (Նիկողայոս Ադոնց, *Հայաստանի պատմութիւն*, «Հայաստան», Երեւան, 1972. նաեւ՝ Յ. Մանանդեան, *Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, հոլմ. Ա.*, Երեւան, 1944, էջ 7-34): «Ալարոդ» անուանման ուշագրաւ ստուգաբանութիւն է առաջարկել ակադ. Գագիկ Սարգսեանը, ըստ որի՝ «ալարոդ» ձեւը կարող էր առաջանալ Սրաշտ > Սրարտի արամէական 'րտի տարրնթերցման արդիւնքում՝ *Արարապ* > *Արարոպ*, այստեղից *ր/լ* հերթագայութեամբ՝ յունարէն ὀλαρόδιο, որից էլ՝ «ալարոդ» ձեւի առաջացումը (Գ. Խ. Սարգսեան, «Ուրարտական Տէրութիւնը եւ հայերը»՝ Բ. Ն. Առաքելեան, Գ. Բ. Զահուկեան, Գ. Խ. Սարգսեան, *Ուրարտո-Հայաստան*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1988, էջ 75):

¹⁵ Ղափանցեան, *Հայոց լեզուի ...*, էջ 71:

խեթական որոշ ցեղախմբեր՝ «... նկարի ունենալով նաեւ խեթերի հայացման հնարաւորութիւնները (12-7 դարերի ընթացքում)»¹⁶, որովհետեւ այդ ժողովուրդները կորցրել էին իրենց երբեմնի հզօր պետականութիւնները, իսկ հայ ժողովուրդը գերազանցապէս կազմաւորում էր այն նոյն տարածքում, որը այդ գործընթացին նախորդող փուլում՝ Ք.ա. ԺԵ.-Ը. դդ., զբաղեցնում էին խեթերը եւ ուրարտացիները: Հայ ժողովրդի կազմաւորման գործընթացում, Ղափանցեանի կարծիքով, իրենց գործուն մասնակցութիւնն են ունեցել նաեւ «ծովային ժողովուրդների» կազմում Բալկաններից փոքրասիական տարածաշրջան ներթափանցած *արմէններ* կոչուող հնդեւրոպական ցեղերը¹⁷: Ըստ նրա՝ հայերին «արմէններ» կոչել են մեղացիներն ու պարսիկները, որը յետոյ «յոյներից իւրացուելով տարածուեց ամէնուրեք»¹⁸:

Ղափանցեանի վերոնշեալ դատողութիւնների հիմքում հայերէնի՝ որպէս խառնածին կամ «երկշերտ» լեզուի մասին պատկերացումն է (հմմտ. «... հայոց նոր լեզուն, որի փայլուն վկայութիւնը մեր հին դասական լեզուն է («գրաբարը»), կազմուել է հայասցիների, խեթերէնի ու խոտա-ուրարտական լեզուների, ինչպէս եւ հնդեւրոպական մի (կամ միքանի) լեզուի խառնուրդով»¹⁹): Ընդ որում, թէպէտեւ «հայերէնը ուժեղ կերպով յագեցած է հնդեւրոպական լեզուական բաղադրիչներով, որոնք առերեսոյթ այդ լեզուին տալիս են ծագումնաբանօրէն խառնածին բնոյթ»²⁰, բայց եւ այնպէս՝ հայերէնի լեզուական նկարագրի համար բնորոշիչը փոքրասիական բաղադրիչն էր (հմմտ. «... հայոց լեզուն իր տիպաբանական-կառուցութեամբն էլ եւ ստրադիալ-գաղափարաբանական բազմաթիւ դրսեւորումներով կամ յարկութիւններով, անկասկած, աւելի մերձենում է հին փոքրասիական (ասիանիկ), քան հնդեւրոպական լեզուներին»²¹): Այդ դրոյթը կրկնուել է նաեւ մէկ

¹⁶ Նոյն, էջ 30: Հմմտ. նաեւ. «Բայց հայասցի-հայերը իրենց արմատական լեզուով, հայացնելով Եփրատի շրջակայ բոլոր այդ ցեղերին, այդ թում՝ նաեւ խեթերին, իսկ աւելի ուշ՝ Ուրարտուի ժողովուրդներին ու ցեղերին, բնականաբար, փոխառել են նաեւ բազմաթիւ բառեր, իսկ հնարաւոր է՝ նաեւ ձեւեր, որ, ըստ իս, պէտք չէ որակապէս նոյնը համարել իրանականից, սիրիականից եւ ուրիշներից յետագայ փոխառութիւնների հետ» (Գ. Ա. Капанцян, «Хайаса – Колыбель Армян», *Историко-Лингвистические Работы* (Հայասան հայերի բնօրրան, Պատմալեզուաբանական աշխատութիւններ), *հրդ. 1*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1956, էջ 126):

¹⁷ Ղափանցեան, *Հայոց լեզուի*, էջ 32:

¹⁸ Նոյն, էջ 39: Ըստ Ադոնցի, սակայն, «Ἀρμένιος յունական ձեւը աւելի հին է, քան պարսիկների Armina, որտեղ -enը փոխուել է -inի» (Ադոնց, էջ 322):

¹⁹ Ղափանցեան, *Հայոց լեզուի*, էջ 40:

²⁰ Գ. Ա. Капанцян, «К Происхождению Армянского Языка» (Հայոց լեզուի ծագման շուրջ), *հրդ. Բ.*, էջ 212:

²¹ Капанцян, *К Происхождению*, էջ 216:

տարի յետոյ լոյս տեսած *Հայասան հայերի բնօրրան* աշխատության մէջ²²: Ուշագրաւ է նաեւ այն, որ ինչպէս հայերէնի հնդեւրոպական ծագման կողմնակիցները (Հրաչեայ Աճառեան, Յակոբ Մանանդեան, Գէորգ Զահուկեան), Ղափանցեանը եւս Ուրարտոյի (= Բիաինիլի²³) բնակչութեան լեզուն չի համարել ոչ միայն նախահայերէնի դրսեւորումներից մէկը, այլեւ առհասարակ հնդեւրոպական լեզու չի համարել²⁴:

²² Հմմտ. «*Բուն հին հայերէն գրաւոր լեզուն իր հիմքում, ըստ իս, Հայասա-Ազգիի իշխող ցեղային լեզուների (կամ լեզուի) յետագայ մշակումը եւ զարգացումն է, որը է. դարում ենթարկուել է խոռոա-ուրարտական փոփոխ լեզուների ուժեղ ազդեցութեանը (= խառնուելուն) Արմինա-Շուպրիա-Արզանների տարածքներում*» (Капанцян, Хаїаса, էջ 78):

²³ Իրենց երկիրն այդպէս են անուանել բիայնացիները (ուրարտացիները) (Г. А. Меликишвили, *Урартские Кинообразные Надписи* (Ուրարտական քնեռագիր արձանագրութիւնները), ԽՍՀՄ ԳԱ հրատ., Մոսկուա, 1960, էջ 8. նաեւ՝ Գ. Բ. Զահուկեան, «Ուրարտերէնը եւ հայերէնը»՝ Առաքելեան, Զահուկեան, Սարգսեան, էջ 131): Ըստ Ղափանցեանի՝ «*Biaina* կամ *Biaini*» նշանակել է «*bia*-ցեղի երկիր» (Գրիգոր Ղափանցեան, *Ուրարտոյի պատմութիւնը*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1940, էջ 19):

²⁴ Ղափանցեան, *Հայոց լեզուի*, էջ 102-46: Ի տարբերութիւն Ղափանցեանի եւ առհասարակ «ուրարտերէն» կոչուած լեզուն հայերէն չհամարողների, անլի ուշ՝ Ի. դարի երկրորդ կէսերից սկսած, առանձին հայագէտներ փորձեցին ապացուցել հակառակ տեսակէտը, ըստ որի՝ ուրարտերէնը հայերէնի հնագոյն վիճակներից մէկն է, իսկ «Ուրարտոն»՝ Վանի կամ Արարատեան Թագաւորութեան ասորաբաբելական (աքադական) անուանումը (Վահան Սարգսեան, *Ուրարտական քաղաքակրթութիւնը եւ բասկերի նախահայրենիքի հարցը*, «Սարգիս Խաչենց», Երեւան, 1988. նաեւ՝ Լեւոն Շահինեան, «*Ուրարտոյ*» առեղծուածը, «Լոյս», Երեւան, 1994): Ռաֆայէլ Իշխանեանի դիրքորոշումն այս առումով միանշանակ չէ. նրա կարծիքով՝ պետութիւնը՝ Ուրարտուն, անլի ստոյգ՝ Վանի կամ Արարատեան Թագաւորութիւնը, հայկական էր, բնակիչները հայեր էին, բայց «ուրարտական» կոչուած արձանագրութիւնների լեզուն, այնուամենայնիւ, հայերէն չէր, այլ խոռոիերէնին մերձաւոր ցեղակից մի լեզու, որին նա տալիս է «նորխուրիերէն» պայմանական անուանումը (Ռ. Ա. Իշխանեան, *Հայ ժողովրդի ծագման ու հնագոյն պատմութեան հարցեր*, «Հայաստան», Երեւան, 1988, էջ 50-79. նոյնի՝ *Բնիկ հայերէն բառեր եւ հնագոյն փոխառութիւններ*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1989, էջ 42-58. նոյնի՝ *Պարկերագարդ պատմութիւն հայոց, գ. I*, «Արեւիկ», Երեւան, 1989, էջ 40-48): «Ուրարտերէնագիտութեան» բնագաւառում մեծ վաստակ ունեցող Զահուկեանը, որ տասնամեակներ շարունակ զգուշաւորութիւն է դրսեւորել «ուրարտական» արձանագրութիւնների լեզուի բնորոշման հարցում (Г. Б. Джаукян, *Урартский и Индоевропейские Языки* (Ուրարտերէնը եւ հնդեւրոպական լեզուները), Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1963. նաեւ՝ Գ. Բ. Զահուկեան, *Հայոց լեզուի պատմութիւն. նախագրային ժամանակաշրջան*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1987, էջ 417-45. նոյնի՝ *Ուրարտերէնը եւ հայերէնը*, էջ 159-67), կեանքի վերջին շրջանում, ըստ էութեան, չբացառեց, որ այն կարող է ընթերցուել նաեւ հայերէնով, այսինքն՝ լինել հայերէնի հնագոյն դրսեւորումներից մէկը (Գէորգ Զահուկ-

Իրականում էլ, ինչպես հին հայերէնին, այնպես էլ հին վրացերէնին բնորոշ էին սուլական եւ չական հպաշփականների միեւնոյն երեք հնչոյթային կարգերը՝ ձայնեղ (հմմտ. ձ/ձ, ջ/ջ), խուլ (հմմտ. ծ/ժ, ճ/ձ) եւ շնչեղ խուլ (հմմտ. ց/ց, չ/ժ)²⁵: Արդեօ՞ք նշուած զուգահեռը բաւարար հիմք է հայերէնի հպաշփականների կազմաւորումը կովկասեան լեզուների ազդեցութեամբ բացատրելու համար: Եթէ հնդեւրոպական լեզուաընտանիքում հպաշփական հնչոյթներ ունենար միայն հին հայերէնը, նշուած հանգամանքը կարող էր, թերեւս, այդպիսի ենթադրութեան համար հիմքեր տալ: Բայց քանի որ, հայերէնից բացի, հպաշփականներ ունէին նաեւ. - ա) *սատրմ* (satəm) խմբի հին հնդեւրոպական միւս լեզուները՝ հնդարիականները (հմմտ. c [č'] (= հյ. չ), ch [č'h] (= չ^h), j [j] (= հյ. ջ) եւ jh [jh] (= ջ^h))՝ հին հնդկերէնում, - ճ [č'] (= հյ. չ) եւ j [j] (= հյ. ջ))՝ հին (աքեմէնեան) պարսկերէնում, աւեստայում եւ պահլաւերէնում²⁶), ընդհանուր սլաւոներէնը եւ հին սլաւոներէնը (հմմտ., - ч [č'] (=

եան, «Ուրարտական արձանագրութիւնների ներածական բանաձեւերի հնարաւոր հայկական բնոյթի մասին», *Պամբանասիրական Հանդէս*, 2000:1, էջ 124-29):

²⁵ Ակակի Շանիձէ, *Հին վրացերէնի քերականութիւն*, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱՀ, 1983, էջ 17-18:

²⁶ Т. Барроу, *Санскрит* (Սանսկրիտ), «Պրոգրէս», Մոսկուա, 1976, էջ 66-111. նաեւ՝ Т. Я. Елизаренкова, *Грамматика Ведийского Языка* (Վեդայերէնի քերականութիւն), «Նաուկա», Մոսկուա, 1982, էջ 64-71, նոյնի՝ “Санскрит”, *Языки мира: Индоевропейские языки древнего и среднего периодов* (Սանսկրիտ, Աշխարհի լեզուները. Հին եւ միջին շրջանների հնդարիական լեզուները), «Ակադեմիա», Մոսկուա, 2004, էջ 31-36. նաեւ՝ А. А. Зализняк, “Грамматический Очерк Санскрита” (Սանսկրիտի քերականական ակնարկ), В. А. Кочергина, *Санскритско-Русский Словарь* (Սանսկրիտերէն-ռուսերէն բառարան), «Ռուսկի եագիկ», Մոսկուա, 1978, էջ 788-98). նաեւ՝ В. С. Расторгуева, “Древнеиранские языки”, *Языки Азии и Африки* (Հին իրանական լեզուներ, Ասիայի եւ Ափրիկէի լեզուներ), *հրդ. II*, «Նաուկա», Մոսկուա, 1978, էջ 16-22: Հին հնդկերէնի քերականութիւններում չ' (=չ) նշանակում է ժով, իսկ յ (=ջ) ն՝ յով: Իրանական եւ սլաւոնական լեզուների քերականութիւններում [č' / չ] համար գործածում է ճ գրանշանը, ըստ ամէնայնի՝ այն պատճառով, որ այդ լեզուները տարբերակում են հպաշփականների մէկ կամ երկու շարք: Մենք հետեւում ենք միջազգային տառադարձական այբուբենին, ըստ որի՝ ձ հյ. ձի համարժէքն է, ճ՝ հյ. ձի, իսկ յ՝ հյ. ձի (Է. Բ. Աղայեան, *Լեզուաբանութեան հիմունքներ*, ԵՀ հրատ., Երեւան, 1987, էջ 302-3): Աճառեանը, հայերէնի ջ, ճ, չ հպաշփականների առնչութեամբ նկատելով, որ դրանց «վրայ նոր բարբառները աւելացրել են շնչեղ թրթռուն ջ՝, որով հայերէնը հասել է ճիշտ սանսկրիտի հարստութեան» (Հ. Աճառեան, *Լիակատար քերականութիւն հայոց լեզուի, հրդ. 6*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1971, էջ 199-200), ըստ էութեան, պարզ խուլ ճ (ճ) ի հնչոյթային (հնչիւնական) արժէք է վերագրում հին հնդկերէնի փն, այնինչ, ըստ սանսկրիտաբանների՝ այդ հնչոյթը եղել է ոչ շնչեղ չ [č'] (Зализняк, էջ 788. նաեւ՝ Елизаренкова, “Санскрит,” էջ 31): Ինչ վերաբերում է «նոր բարբառների»

հյ. չ), չ [j' ɹ' ʒ'] (= հյ. ձ), ւ [c'] (= հյ. ց))²⁷, լիտուերէնը (հմմտ. ւ [c'] (= հյ. ց) եւ չ [č'] (= հյ. չ))²⁸, ք) *կենտրում* (centum) խմբից՝ հին յունարէնը (հմմտ. չ [dz], ξ [ks], ψ [ps])²⁹, գ) համեմատաբար ուշ այդպիսի հնչիւն առաջացել է *կենտրում* խմբի լատիներէնում՝ ւ [c'] (<[k]), դ) ունեն ինչպէս *սաւորը*, այնպէս էլ *կենտրում* խմբի ժամանակակից բազմաթիւ լեզուներ (ռուսերէն, գերմաներէն, իտալերէն, անգլերէն, իսպաներէն, բուլղարերէն, սերբերէն, լեհերէն, լատիշերէն, օսերէն, պարսկերէն, բելուջերէն)³⁰, ապա նշանակում է՝ հին հայե-

ջ' [ջ']ին, այսինքն՝ շնչել ձայնել հպաշփականին, մենք արդէն ցոյց ենք տուել, որ ինչպէս նոր բարբառներում, այնպէս էլ հին հայերէնում այն կարող էր լինել <Ջ> հնչոյթի դիրքային տարբերակ, այն է՝ ունենալ միայն հնչիւնական, բայց ոչ՝ հնչոյթային արժէք (Վարդան Պետրոսեան, «Հին հայերէնի հպաշփականների հնչարանական բնութագրերը», *Հայագիտութեան հարցեր*, 2020:2(20), էջ 203-4):

²⁷ А., Мейе *Общеславянский Язык* (Ընդհանուր սլաւոներէն), ԱԳՀ («Արտասահմանեան գրականութեան հրատարակչութիւն»), Մոսկուա, 1951, էջ 15-23. նաեւ՝ А. М. Селищев, *Старославянский Язык* (Հին սլաւոներէն), *Дша I*, ՌԽԴՍՀ լուսատրութեան նախարարութեան պետական ուսումնա-մանկավարժական հրատարակչութիւն, Մոսկուա, 1951, էջ 199-207. նաեւ՝ А. Байан, *Руководство По Старославянскому Языку* (Հին սլաւոներէնի ձեռնարկ), «Արտասահմանեան գրականութեան հրատարակչութիւն», Մոսկուա, 1952, էջ 71-2. նաեւ՝ А. И. Горшков, *Старославянский Язык* (Հին սլաւոներէն), «Բարձրագոյն դպրոց», Մոսկուա, 1974, էջ 95:

²⁸ М. Н. Петерсон, *Очерк Литовского Языка* (Լիտուերէն լեզուի ակնարկ), ԽՍՀՄ ԳԱ հրատ., Մոսկուա, 1955, էջ 13-14: Թէ այդ հպաշփականները լիտուերէնում երբ են առաջացել՝ դժուար է ասել, որովհետեւ լիտուական գիրը շատ ուշ է ստեղծուել՝ ԺԶ. դարում (առաջին գիրքը այդ լեզուով տպագրուել է 1547ին), հետեւաբար այն չի կարող օգնել կողմնորոշուելու հպաշփականների առաջացման ժամանակի հարցում: Նկատի ունենալով, որ հնդեւրոպաբանութեան մէջ յաճախ խօսուում է բայթօ-սլաւոնական երբեմնի լեզուամիութեան մասին, պիտի կարծել, որ լիտուերէնում եւ առհասարակ բայթեան լեզուներում հպաշփականների առաջացման ժամանակը չէր կարող էականօրէն տարբերուել սլաւոնական հին լեզուներում դրանց առաջացման ժամանակից:

Ալբաներէնում, որը նոյնպէս դասուում է *սաւորը* լեզուների շարքին եւ լիտուերէնի նման ուշ է գրի առնուել (ԺԵ. դարում), ըստ նշանաւոր ալբանագէտ Ն. Եոկլի՝ հ.-ե. քմայնացածների սուլաշականացումը (*սիրիլեանդացումը*) ուշ է տեղի ունեցել եւ առհասարակ այդ առումով ալբաներէնը միջին դիրք է գրաւում *կենտրում* եւ *սաւորը* լեզուների միջեւ (А. В. Десницкая, *Сравнительное Языкознание и История Языков* (Համեմատական լեզուաբանութիւնը եւ լեզուների պատմութիւնը), «Նաուկա», Լենինգրադ, 1984, էջ 223-24:

²⁹ В. П. Нерознак, “Греческий язык”, *Лингвистический Энциклопедический Словарь* (Յունարէն, լեզուաբանական հանրագիտական բառարան), «Խորհրդային հանրագիտարան», Մոսկուա, 1990, էջ 119:

³⁰ Աճառեան, *Լիակատար*, էջ 198-200, 213:

րէնի հալաշփականների առաջացումը միայն կովկասեան ենթաշերտի ազդեցութեամբ բացատրելը առնուազն միակողմանի է, եթէ ոչ՝ սխալ³¹:

ՀԻՆ ՀԱՅԵՐԷՆԻ ՀՊԱՇՓԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԴԵՐՈՊՊԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐԿԱԾԸ

Վերոյիշեալ հեղինակներից բացի, հայերէնի եւ կովկասեան լեզուների, մասնատրապէս՝ վրացերէնի, հնչոյթային համակարգերի առնչութիւնների հարցին անդրադարձել են նաեւ Հովգէր Պեդերսընը եւ Զահուկեանը:

Պեդերսընը չի բացառել, որ հայերէնում եւ կովկասեան լեզուներում հալաշփական հնչոյթների առկայութիւնը կարող է փոխադարձ շփումների արդիւնք լինել, բայց ոչ երբեք՝ հայերէնի վրայ կովկասեան լեզուների ազդեցութեան հետեւանք: Աւելին, մեծ նշանակութիւն չտալով հայերէնի եւ կովկասեան լեզուների «ծայնական դրութեան» նմանութեանը, նա չի բացառում, որ այդ նմանութիւնը կարող էր տեղի ունեցած լինել «կալկասեան ծայնական դրութեան վրայ՝ հայերէնին ազդեցութեամբ»³²: Ըստ Պեդերսընի, չնայած որ հայերէնի հնչիւնական զարգացումը «համեմատութեամբ միւս հնդկ-գերմանական լեզուներուն շատ արագ կատարուած է», բայցեւայնպէս, հայերէնն ընթացել է զարգացման նոյն ուղղութեամբ, ինչ եւ միւս հնդեւրոպական լեզուները³³: Հետեւաբար, նրա կարծիքով, հայերէնի հալաշփականները հնդեւրոպական երեւոյթ են:

Ըստ Զահուկեանի, հայերէնում «հալաշփականների եւ շփականների կազմաւորումը» նախորդել է կովկասեան լեզուների հետ հայերէնի շփումներին, որովհետեւ կովկասեաններից «*հայերէնի կալարած փոխառութիւններում չի նկատուում չչական եւ սուլական հալաշփականների փոխարի-*

³¹ Հ.-ե. լեզուները երկու՝ *satəm* (*սալըմ*) եւ *centum* (*կենտում*) խմբերի առաջին անգամ բաժանել է Բրադկէն 1888ին (В. Порциг, *Членение Индоевропейской Языковой Общности* (Հնդեւրոպական լեզուական ընդհանրութեան տրոհումը), «Պրոգրէս», Մոսկուա, 1964, էջ 49): Դեռեւս նախորդ դարի կէսերից սկսած հ.-ե. լեզուները *սալըմ* եւ *կենտում* խմբերի բաժանելուն լեզուաբաններից շատերը վերաբերուել են վերապահումով: Ընդամին՝ եղել են նաեւ այլ առաջարկներ (Г. Б. Джаукян, *Очерки По Истории Дописьменного Периода Армянского Языка* (Ակնարկներ հայոց լեզուի նախագրային շրջանի պատմութեան), Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1967, էջ 44-47), այդ թւում՝ **km̥təm* եւ **k'm̥təm* (Джаукян, *Очерки*, էջ 44): Սակայն, չնայած *սալըմ* եւ *կենտում* բաժանման առնչութեամբ արտայայտուած վերապահումներին, արդի հնդեւրոպաբանութեան ոչ-բոլոր ներկայացուցիչներն են այն հիմնադրով համարել (Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, *Индоевропейский Язык И Индоевропейцы* (Հնդեւրոպական լեզուն եւ հնդեւրոպացիները), *հպր.* 1, Թբիլիսի, 1984, էջ 115): Մենք նոյնպէս, նկատի ունենալով, որ այդ խնդիրը դեռեւս մնում է համեմատական լեզուաբանութեան չլուծուած հարցերից մէկը, վերապահութեամբ հետեւում ենք այդ բաժանմանը:

³² Հովգէր Պեդերսըն, «Հայերէնի դիրքը», *Հանդէս ամսօրեայ*, 1929:1, էջ 120:

³³ Նոյն, էջ 120-21:

նում այլ հնչյուններով»³⁴: Աւելին, «... հալաշփականացումը եւ շփականացումը առաջին քմայնացման արդիւնքում եղել են երկարատեւ գործընթացներ, որոնք սկսուել են ընդհանրութեան [ընդհանուրհնդեւրոպական - Վ.Պ.] փուլում եւ շարունակուել են հ.-ե. լեզուների առանձին գոյութեան փուլում (հմմտ. քմայնացած հետնալեզուայինների կանոնաւոր անցումը հայերէնում սովական հալաշփականների եւ շփականների)»³⁵: Հետեւաբար, «հիմք կայ ենթադրելու», որ հալաշփական «հնչյունները կան նաեւ հայերէնից կատարուած կովկասեան հնագոյն փոխառութիւններում»³⁶: Հմմտ. հյ. *արծուի* (< հ.ե. *ǵripījo) > վրաց. arc'ivi «արծիւ», հյ. *ծաղիկ*, -աց (< հ.ե. *g'ɛl- ?) > վրաց. c'alik «վառվառուկ (թոյս)», հյ. *ծաղկոյրի* > վրաց. c'alqoti «բանջարանոց» (>c'), հյ. *աղանձ* (< հ.-ե. *lendh- ?) > վրաց. alanjwa «վառել, խանձել» (>j), հյ. *արծաթ* (< հ.-ե. *arg'əto-) > վրաց. werxli, մեգր. warčli «արծաթ» (>c/č), հյ. *ործ* (< հ.-ե. *org'h- «արու ոչխար») > վրաց. werji³⁷, մեգր. erji «արու ոչխար» (>j/ǵ), հյ. *ցախ* (< հ.-ե. *(s)kākḥ-) > մեգր. cxweḳ, cxwiḳ- «չոր ցախ» (g>c)³⁸: Զահուկեանի կարծքով բաւարար հիմքեր չկան նաեւ «կովկասեան կենդանի լեզուների մէջ խոտա-ուրարական լեզուաընտանիքին մերձաւոր ցեղակից լեզուներ որոնելու» համար, որի փորձերը նախորդ դարի կէսերին արել են Եան Բրաունը, Գէորգի Կլիմովը, ապա Իգոր Դիակոնովը³⁹:

Ինչ վերաբերում է Հայաստանի լեզուի հետ հայերէնի առնչութիւններին, ապա, ըստ անուանի լեզուաբանի, հայասերէնը «հայերէնից տարբեր հնդեւրոպական լեզու [է եւ] ցեղակից է խոթա-լուական լեզուներին»⁴⁰:

ՀԻՄՆԱՀԱՐՅԸ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՀԱՅԵՐԷՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՏԵՍԱՆԿԻՆՆԵՐԻՑ

Բանն այն է, որ Ղափանցեանը վերապահութեամբ էր ընդունում նաեւ խեթերէնի հնդեւրոպական ծագումը (հմմտ. «... ինչպէս խեթերէն լեզուն, որ աւելի է հնդեւրոպական իր քերականութեան մէջ, բայց բառապաշարը շարքիչ է հնդեւրոպական»⁴¹: Կամ՝ «Եւ խեթերէնը, որ չգիտեմ ինչու անվերապահօրէն կոչում է հնդեւրոպական կամ մի առանձին ներկայացուցիչ այդ

³⁴ Джаукян, Очерки, էջ 329-30:

³⁵ Նոյն, էջ 44:

³⁶ Նոյն, էջ 329-30:

³⁷ Հ.-ե. ծագման «ործ» (< *org'hi- «ձու, (ամ)ործի») բառը (Գէորգ Զահուկեան, *Հայերէն ստուգաբանական բառարան*, «Ասողիկ», Երեւան, 2010, էջ 607) առհասարակ արուի նշանակութեամբ գործածում է հայերէնի խօսակցական ոճում եւ բարբառներում:

³⁸ Օրինակներն ըստ Զահուկեան, *Հայոց լեզուի*, էջ 580:

³⁹ Զահուկեան, «Ուրարտերէնը», էջ 133-34:

⁴⁰ Զահուկեան, *Հայոց լեզուի*, էջ 323:

⁴¹ Ղափանցեան, *Հայոց լեզուի*, էջ 31:

լեզուաընտանիքի կողքին, ունի բազմաթիւ ոչ հնդեւրոպական տարրեր, թէ՛ պէտք աւելի քիչ, քան հայերէնը»⁴²):

Եթէ Պեդերսընի եւ Զահուկեանի տեսակէտերը մնում են հայերէնագիտական մասնատու հարցի դիտարկման շրջանակներում, ապա խնդրի դափանցեանական քննութիւնը դուրս է գալիս այդ սահմաններից՝ ներառելով հայերէնի, հետեւաբար նաեւ հայ ժողովրդի կազմաւորման եւ (նախա)հայրենիքի տեղադրութեան հիմնահարցերի անհամեմատ լայն շրջանակ: Լինելով հայ ժողովրդի «բնօրրանը» (նախահայրենիքը - Վ.Պ.) Հայկական Բարձրաւանդակում տեսնելու համոզուած կողմնակից, այլ ոչ թէ հայերին համարելու Եւրոպայից գաղթեալներ, ինչպէս որ ընդունուած էր իր ժամանակի թէ՛ պատմագիտութեան եւ թէ՛ հնդեւրոպական լեզուաբանութեան մէջ, Ղափանցեանը, ըստ ամէնայնի, իր տեսակէտի օգտին փաստարկներ էր փնտռում ոչ միայն ի դէմս տարածաշրջանի հին լեզուների, այլեւ՝ հին աշխարհի պատմութեան դեռեւս թերի լուսաբանուած էջերում: Հնարաւոր է՝ «ուրարտական» կոչուած սեպագրերի եւ մեհենագրերի լեզուն հայերէնով մեկնելու դժուարութիւնները, ինչպէս նաեւ դրանց «ոչ հնդեւրոպական» բնոյթի վերաբերեալ գիտութեան մէջ արդէն ձեւաւորուած պատկերացումն են նրան մղում հայերի նախնիներին փնտռելու տարածաշրջանի աւելի հին բնակիչների մէջ՝ ի դէմս Հայաստ կամ «Հայաստ-Ազգի» ցեղապետութեան ժողովրդի՝ հայասցիների: Սակայն ինչպէս հայերէնի հնդեւրոպական ծագման առնչութեամբ ունեցած վերապահումները, Ղափանցեանի այս տեսակէտը նոյնպէս հայագիտութեան մէջ հետեւորդներ չունեցաւ: Եւ հայ պատմագիտութիւնը, եւ՛ պատմահամեմատական հայերէնագիտութիւնը հիմնականում շարունակեցին զարգանալ արդէն իսկ նախանշուած ուղղութեամբ:

Կարծում ենք՝ հին հայերէնի հպաշփականների տարածմանակեայ, մասնաւորապէս ծագումնաբանական քննութիւնը պիտի իրականացուի՝ հաշուի առնելով հետեւեալ իրողութիւնները.-

1) Հնդեւրոպական հին լեզուներից հպաշփական հնչոյթներ ունէին միայն *սապըմ* (արեւելեան) խմբին պատկանողները: Ընդ որում, նշուած բոլոր լեզուներում հպաշփականները եղել են դեռեւս նախագրային փուլում, այսինքն՝ մեր օրերից առնուազն 1500-2500 տարի առաջ, հնարաւոր է՝ շատ աւելի վաղ: Հետեւաբար, եթէ հպաշփականները բնորոշ լինէին միայն արեւելեան տարածքի հ.-ե. լեզուներին (բարբառներին), դրանց առկայութիւնը որոշակի արժանահաւատութեամբ կարելի կը լինէր բացատրել այդպիսիք ունեցող տեղական ոչ-հնդեւրոպական լեզուների հետ պատմական շփումներով կամ ազդեցութեամբ, ինչպէս որ դա արել են Հիւբշմանը, Մէլեն եւ Ղափանցեանը: Սակայն հարցը բարդանում է նրանով, որ հպաշփական(ներ) ունէր *սապըմ* խմբին պատկանող, բայց արեւմտեան բարբառախմբի

⁴² Նոյն, էջ 217:

տարածքում՝ Երուսալյում, ներկայացուած հին ալբաներէնը, եւ, ընդհակառակը, այդպիսիք չունէին արեւելեան բարբառախմբի տարածքում ներկայացուած, բայց *կենտրոն* խմբին վերագրուող խեթալուսիական եւ թոխարական լեզուները:

2) Հայոց լեզուի հնդեւրոպական բնոյթը անհերքելի կերպով ապացուցուած է դեռեւս պատմահամեմատական հնդեւրոպաբանութեան առաջին փուլում՝ ԺԹ. դարի առաջին կէսերին եւ որոշակիացուած է 1880ականներին Հիւբշմանի յայտնի աշխատութեամբ (*Հայերէնի դիրքը հնդեւրոպական լեզուների շարքում*, 1875), սակայն լեզուական ցեղակցութիւնը ոչ բոլոր դէպքերում է նաեւ ցեղակից լեզուները կրող ժողովուրդների (ազգութիւնների, ցեղերի) ծագումնաբանական ընդհանրութեան վկայութիւն: Օրինակ, յայտնի է, որ Ֆրանսիայի բնիկները՝ գալլերը, ծագումնաբանօրէն կելտեր էին, բայց ֆրանսերէնը կելտական լեզու չէ, այլ իտալեան (ռոմանական) ճիւղի լեզու (ճիշտ է՝ դարձեալ հնդեւրոպական): Ֆրանսիայի բնիկների՝ գալլերի լեզուն իր ծագումնաբանական տիպը փոխել է լատիներէնի ազդեցութեամբ՝ Հռոմէական Կայսրութեան երկարատեւ տիրապետութեան դարաշրջանում (Ք.ա. Բ. դար-Ք.ե. Ե. դար): Ասուածը, իհարկէ, չի նշանակում, թէ մենք ժխտում ենք հայ ժողովրդի հնդեւրոպական ծագումը, այլ միայն նշանակում է, որ հայ ժողովուրդը կազմաւորման երկարատեւ գործընթացում, ըստ ամէնայնի, իր մէջ ներառել է ինչպէս հնդեւրոպական, այնպէս էլ ոչ-հնդեւրոպական ցեղերի ու ժողովուրդների, որոնց լեզուները կարող էին իրենց դրոշմը թողնել ձեւաւորուող հայերէնի վրայ: Հայկական Լեռնաշխարհում այդպիսի ժողովուրդների գոյութեան մասին յիշատակումներ ունեն ինչպէս ուրարտական, խեթական եւ ասորական սեպագիր արձանագրութիւնները, այնպէս էլ հին աշխարհի պատմիչները՝ Հերոդոտոսը, Քսենոփոնը, Եւդոքսոսը, Ստրաբոնը⁴³: Այդ «ժողովուրդների» մեծ մասը, եղել են հայկական ցեղախմբեր, որոնք համապատասխան տարածքներում բնակուել են նախքան Նաիրի ցեղապետութիւնների գոյութեան դարաշրջանը (Ք.ա. Բ. հազարամեակի կէսեր), եւ որոնց անունները պահպանուել են իրենց բնակութեան գաւառների վրայ (*կարդուիւններ*՝ Կորդուք, *տառիւններ*՝ Տայք, *փասիաններ*՝ Բասէն եւն.)⁴⁴: Բայց յիշատակումներ կան նաեւ տարբեր հանգամանքներում այնտեղ յայտնուած ոչ-հայկական ցեղախմբե-

⁴³ Հմմտ. Հերոդոտոս, *Պատմութիւն ինը գրքից*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1986. նաեւ՝ Քսենոփոն, *Անաբասիս*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1970. նաեւ՝ Գ. Սարգսեան, «Պատմահայր Հերոդոտոսը», *Հերոդոտոս*, էջ 568-78. նաեւ՝ Գ. Տիրացեան, «Անաբասիսը» եւ Հայաստանը, *Քսենոփոն, Անաբասիս*, էջ 221-39. նաեւ՝ *Հայ ժողովրդի պատմութիւն, հտր. I*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1971, էջ 175-464:

⁴⁴ Սարգսեան, «Ուրարտական Տէրութիւնը», էջ 62:

րի մասին, ինչպես սկիզբների (կամ սակերի, այստեղից՝ Սակասէն/Շակաշէն)⁴⁵, սայսպէրների/հեսպերիտների (այստեղից՝ Սպէր), կիմէրների, խալիւների (Խաղտիք), մարդերի/մարերի, միտանացիների են, որոնցից որոշների, օրինակ՝ կիմէրների եւ սայսպէրների ծագման եւ լեզուի մասին չեն պահպանուել բաւարար տեղեկութիւններ, որոնք կարող էին պատկերացում տալ նրանց էթնիկական եւ լեզուական պատկանելութեան մասին: Օրինակ, որպէս կիմէրների նախահայրենիք՝ նշում է հիւսիսսեւծովեան տարածաշրջանը, որտեղից ենթադրաբար նրանք տեղաշարժուել են երկու ուղղութիւններով՝ դէպի արեւմուտք եւ դէպի հարաւ, ընդհուպ՝ մինչեւ Ուրմիա լճի հարաւային մասերը⁴⁶: Կիմէրներին է վերագրում Փոփուգիայի կործանումը (Ք.ա. 676-74)⁴⁷, հաւանաբար՝ ուրարտացիների մասնակցութեամբ, որոնց հետ նրանք դաշինք էին կնքել մինչ այդ⁴⁸:

3) Նախորդ երկու դրոյթները հիմք են տալիս ասելու, որ փոխադարձ կապ կայ հայերէնի հալաշփական հնչոյթների առաջացման եւ Հայկական Լեռնաշխարհում հայերի բնիկ կամ եկուոր լինելու հարցադրումների միջեւ: Իսկ այդ հանգամանքը պայմանաւորուած է նաեւ հ.-ե. նախահայրենիքի տեղորոշումով: Մինչեւ նախորդ դարի վերջերը հայագիտութիւնը, այդ թւում՝ պատմահամեմատական հայերէնագիտութիւնը, ասանդաբար հետեւել է հ.-ե. նախահայրենիքի տեղադրման եւրոպական վարկածին, ըստ այդմ՝ ընդունելով դրանից բխող՝ իրենց պատմական հայրենիքում հայերի եկուոր լինելու դրոյթը⁴⁹: Հ.-ե. նախահայրենիքը Եւրոպայում տեղադրող կանխադրոյթի համաձայն *սարքը* խմբի լեզուների կրող հնդեւրոպական ժողովուրդները իրենց պատմական հայրենիքներում յայտնուել են Ք.ա. Բ.-

⁴⁵ Ադոնց, էջ 304:

⁴⁶ Զահուկեան, *Հայոց լեզուի*, էջ 493-94: *Հայաստանի պատմական արվասի* հեղինակները Ք.ա. Ը. դ. վերջին (721) որպէս կիմէրների բնակութեան տարածք են նշում Ուրարտուի հիւսիսարեւելեան շրջանը (Կլոդ Արմէն Մութաֆեան, Էրիկ Վան Լովէ, *Հայաստանի պատմական արվաս (Մերձատր Արեւելքը եւ Հարաւային Կովկասը մ.թ.ա. VII դարից մինչեւ XXI Դար)*, «Տիգրան Մեծ», Երեւան, 2017, էջ 15), այսինքն՝ Արեւելեան Հայաստանի տարածքը:

⁴⁷ Ք.ա. Ը. դարի կէսերին Փոփուգիան Փոքր Ասիայի մեծ երկրներից էր, զբաղեցնում էր Հայկական Լեռնաշխարհի՝ ներկայիս Թուրքիայի Հանրապետութեան կենտրոնական տարածքները (Մութաֆեան, Լովէ, էջ 15): Այդ ժամանակաշրջանը զուգահեռ է նաեւ Ուրարտուի վերելքին (Ն. Վ. Յարութիւնեան, «Բիայնիլի-Ուրարտուն ծաղկման դարաշրջանում», *Պատմաքանասիրական հանդէս*, 1967:2(37), էջ 39-56):

⁴⁸ Զահուկեան, *Հայոց լեզուի պատմութիւն*, էջ 493-94:

⁴⁹ Meillet, *Esquisse*, էջ 12. նաեւ՝ Հ. Աճառեան, *Հայոց լեզուի պատմութիւն, մաս I*, ԵՀ հրատ., Երեւան, 1940, էջ 8. նաեւ՝ Ադոնց, էջ 312, 366. նաեւ՝ Մանանդեան, էջ 7-23. նաեւ՝ Բ. Ն. Առաքելեան, «Ուրարտուն եւ հայ ժողովրդի կազմաւորումը», Առաքելեան, Զահուկեան, Սարգսեան, էջ 5-46. նաեւ՝ Սարգսեան, «Ուրարտական Տէրութիւնը», էջ 47-126:

Ա. հազարամեակներում տեղի ունեցած տեղաշարժերի հետեւանքով: Մի մասը փոքրասիական տարածաշրջան է ներթափանցել Բալկանեան Թերակղզով, իսկ միւս մասը՝ ներկայիս Ռուսաստանի Դաշնութեան տարածքով, մասնատրապէս՝ Սեւ Ծովի հիւսիսային ափերով: Աւանդական պատմահամեմատական հայերէնագիտութեան մէջ շրջանառուած վարկածի համաձայն հայերի նախնիները եղել են Բալկաններից Փոքր Ասիա ներթափանցած ժողովուրդների կազմում (փոփոցացիներ, թրակացիներ, միգիացիներ, ենթադրում է՝ նաեւ յունական որոշ ցեղախմբեր)⁵⁰: Վերջինները պատմագիտութեան մէջ յայտնի են «ծովային ժողովուրդներ» անուանումով⁵¹: Այդ գաղթը թուագրում է մօտաւորապէս Ք.ա. ԺԳ. դարի վերջով եւ

⁵⁰ Ըստ էութեան, այդ վարկածին են հետեւել Ադոնցը, Մանանդեանը, Աճառեանը:

⁵¹ Ք.ա. ԺԳ. դ. մերձարեւելեան եւ եգիպտական վաւերագրերը վկայում են «ծովային ժողովուրդների»՝ միմեանց յաջորդած տեղաշարժերի երկու ալիքի մասին: Մի տեսակէտի համաձայն «ծովային ժողովուրդների» առաջին տեղաշարժի բարձրակէտ է համարում ԺԳ. դարի վերջ-ԺԲ.ի սկիզբը (С. А. Ромашко, *К реконструкции языковой ситуации в восточном средиземноморье II тысячелетия до н. э.. Языковая принадлежность “народов моря”, Сравнительно-историческое изучение языков разных семей (Лексическая реконструкция. Реконструкция исчезнувших языков)* (Մ.թ.ա. Բ. հազարամեակի արեւելեան միջերկրածովեանում լեզուական իրավիճակի վերականգնման շուրջ: «Ծովային ժողովուրդների» լեզուական պատկանելութիւնը, տարբեր ընտանիքների լեզուների պատմահամեմատական ուսումնասիրութիւն (Բառապաշարային վերականգնում: Անհետացած լեզուների վերականգնում)), «Նաուկա», Մոսկուա, 1991, էջ 64-76): Երկրորդ տեղաշարժի մասին եւս նշում է գրեթէ նոյն ժամանակը: Կարծում ենք՝ պատճառը այդ երկու տեղաշարժերի նոյնացումն է, այսինքն՝ դրանք իբրեւ միեւնոյն ընկալելը, որը առհասարակ դրանց մասին տեղեկութիւնների աղքատութեան հետեւանք է: Եգիպտական վաւերագրերում յիշատակում է *շերդէն/շարդանա, էկէշ/ակաաշու, շեկէշ/շեկելուշա, դենյէն/դանունա, լուկ(կ)ա, փերէշ/փուրուշա, վեշէշ, փեկէր/գեկէր, պելեսփ/պուլասփի* ժողովուրդների մասին, որոնց ինչպէս էթնիկական պատկանելութեան, այնպէս էլ լեզուների վերաբերեալ հաւաստի տեղեկութիւններ չկան: Նշուածներից, օր., *պելեսփ/պուլասփի* ժողովուրդը որոշակի արժանահատութեամբ նոյնացում է *Հին Կրակարանի ֆիլիստինեանների* հետ (որոնք բնակուելով Պաղեստինում, տարրալուծում են տեղաբնակ սեմական ժողովրդի/ ժողովուրդների մէջ), *շերդէններն* ու *շուկուլուշաները* նոյնացում են *սարդերի* (Սարդինիա) եւ *սիկուլների* (Սիցիլիա) հետ: Ոմանք փորձել են *էկէշը* նոյնացնել յունական *աքէացիներ* (յուն. Ἀχαι(Ε)οί, հմմտ. խեթ. Ahhijawa) ցեղանուն, իսկ *լուկ(կ)ան*՝ լիկիացիների (խեթ. Luka) հետ, բայց այդ նոյնացումների համար բաւարար հիմքեր չկան: Փոփոցացիների, թրակացիների, միգիացիների, դարդանեանների, ըստ ամէնայնի՝ նաեւ յունական որոշ ցեղախմբերի գաղթը վերաբերում է «ծովային ժողովուրդների» տեղաշարժի երկրորդ ալիքին (Ромашко), որը, ըստ վերոյիշեալի, պիտի տեղի ունեցած լինի աւելի ուշ, բայց Վ. Պ. Ներոզնակի կարծիքով, նկատի ունենալով Հոմերոսի *Իլիական*ում տեղ գտած տեղեկութիւնը Տրո-

ԺԲ.ի սկզբով: Հիմք ընդունելով մի կողմից՝ փոփոխների (Բալկաններում բնակութեան շրջանում՝ մինչեւ փոքրասիական տարածաշրջան անցնելը, նրանց անուանել են *բրիզներ*, իսկ իրենց նոր՝ փոքրասիական հայրենիքում՝ *մուշկեր*) եւ հայերի ընդհանրութիւնների մասին հին աշխարհի պատմիչների աշխատութիւններում տեղ գտած որոշ վկայութիւններ⁵², իսկ միւս կողմից՝ փոփոխերէնի եւ հայերէնի, խեթերէնի եւ հայերէնի միջեւ նկատուող լեզուական (հնչիւնական, բառակազմական, ձեւաբանական) ընդհանրութիւնները, ոմանք ոչ միայն «ծովային ժողովուրդների» կազմում յաւելել են նաեւ հայերին (ըստ յոյների եւ պարսիկների՝ *արմէներին*), այլեւ, աւելի հեռուն գնալով, հայերի նախնիներ համարել են փոփոխացիներին, ուրիշներն էլ՝ խեթերին: Հայերէնի եւ փոփոխերէնի միջեւ մերձաւոր ցեղակցական կապի մասին խօսել են ԺԹ. դարավերջ-Ի.ի առաջին կէսի համեմատական հնդեւրոպաբանութեան մի շարք ներկայացուցիչներ (Պոլ դը Լագարդ, Ֆրիդրիխ Միլլեր, Ռիխարդ Գոշէ, Հիւբշման, Պետեր Ֆոն Բրադկէ, Հերման Հիրտ, Եովիուս Պոկոռնի, Զուլիանո Բոնֆանտէ, Վ. Բենեցիանու, Դիակոնով)⁵³: Ընդհանուր առմամբ զգուշաւոր Հիւբշմանը սկզբնական շրջանում

վաղայի պատերազմին փոփոխացիների եւ թրակացիների մասնակցութեան մասին, «ինչպէս նաեւ հնաբալկանեան տեղանուանաբանութիւնը Տրովադայում, կարելի է ապացուցուած համարել, որ փոփոխացիների եւ հնաբալկանեան որոշ այլ ցեղերի ... վերաբնակեցումը տեղի է ունեցել նախքան մ.թ. ԺԳ. դարի սկիզբը» (В. П. Нерознак, *Палеобалканские Языки* (Հնաբալկանեան լեզուներ), «Նաուկա», Մոսկուա, 1978, էջ 66:

⁵² Այս առումով ուշագրաւ է յատկապէս պարսից Քսերքսէս արքայի յունական արշաւանքի մասին (Ք.ա. 480) Հերոդոտոսի վկայութիւնը՝ *փոփոխացի* եւ *արմէ* (= *հայ*) ռազմիկների միեւնոյն տեղից լինելու եւ միատեսակ զինուածութեան մասին. «Արմէները եւս, լինելով փոփոխական վերաբնակիչներ, զինուած էին փոփոխների նման» (Հերոդոտոս, էջ 409):

⁵³ В. Порциг, *Членение*, էջ 52-65. նաեւ՝ Գ. Բ. Զահուկեան, *Հայերէնը եւ հնդեւրոպական հին լեզուները*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1970, էջ 104-105. նաեւ՝ Դ. Б. Джаукян, *Сравнительная Грамматика Армянского Языка* (Հայոց լեզուի համեմատական քերականութիւն), Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1982, էջ 201: Զահուկեանի կազմած վիճակագրական աղիւսակի համաձայն փոփոխերէնը հայերէնի հետ մեծ ընդհանրութիւններ է երեւան հանում «հնչիւնաբանական մերձաւորութեան աստիճանով» եւ առաջինն է յատկապէս ըստ «կարեւորագոյն հնչիւնաբանական զուգաբանութիւնների»: Քերականական յատկանիշների մերձաւորութեամբ այն միջին դիրք է գրաւում, իսկ լեզուական ընդհանուր կառուցուածքի «կարեւորագոյն գծերով» այն երրորդ տեղում է (Джаукян, *Сравнительная*, էջ 204-5): Այսինքն՝ բոլոր կարգի զուգաբանութիւններով փոփոխերէնը հայերէնին մօտ եղող հ.-ե. Լեզուներից մէկն է, բայց ամէնից մերձաւորը չէ: Իդէպ, հայերէնի եւ փոփոխերէնի հնչիւնաբանական մերձաւոր ընդհանրութիւնների մասին նշել է նաեւ Գէորգիելը (В. И. Георгиев, «Передвижение Смычных Согласных в Армянском Языке и Вопросы Этногенеза Армян» (Հայական քաղաձայնների

տուրք է տալիս հայերէն-փոփոգերէն մերձաւոր կապի դրոյթին (հմմտ. «... կարելի է հնարաւոր համարել», որ փոփոգերէնը «հայերէնի հետ անլի մօտ ազգակից էր»⁵⁴), սակայն անլի ուշ հրաժարում է այդ տեսակէտից⁵⁵: Օ. Հաասը հնարաւոր է համարում հայերէնի մերձաւոր ցեղակցական կապը նախափոփոգերէնի հետ, բայց մերժում է դրա հնարաւորութիւնը «հայերէնի եւ փոփոգական արձանագրութիւնների լեզուի միջեւ»⁵⁶, իսկ Վլադիմիր Գէորգիեւը ուղղակիօրէն առաջադրում է այդ լեզուների ծագումնաբանական նոյնականութեան դրոյթը: Վերջինս եթէ հիմքեր չէր տեսնում վիճարկելու «հների (իմա՝ Հերոդոտոսի եւ Ստրաբոնի - Վ.Պ.) վկայութիւնները» հայերի՝ «փոփոգիացիների գաղութ» (Φοργῶν ὁποικοι) լինելու մասին եւ հայերէնն ու փոփոգերէնը համարում էր «հայ-փոփոգական լեզուախմբի երկու բարբառներ, որոնցով Գ. հազարամեակում խօսել է Բալկանեան Թերակղզու կենտրոնական մասում բնակուած (նախա)հայ-փոփոգական բնակչութիւնը»⁵⁷, ապա շատ չանցած՝ հայերէնի բարբառների բանավէճի առիթով գրուած յօդուածում նրա դիրքորոշումը դառնում է անլի արմատական՝ «Փոփոգերէնը այն լեզուն է, որը հիմք է եղել հայոց լեզուի համար»⁵⁸:

Հիմնուելով առաւելապէս հին աշխարհի պատմիչների եւ պատմագիտական քննութիւնների վրայ՝ հայերի եւ թրակափոփոգական ցեղերի մերձաւոր կապի մասին դրոյթը հակուած էր ընդունելու նաեւ Մանանդեանը⁵⁹:

Հայերի եւ փոփոգների, հետեւաբար նաեւ հայերէնի եւ փոփոգերէնի միջեւ ցեղակցային մերձաւոր կապի հնարաւորութիւնը ժխտել են Մէլէն, Աճառեանը եւ Նիկողայոս Ադոնցը⁶⁰: Մէլէի կարծիքով հայերէնի եւ փոփոգերէնի մերձաւոր կապի մասին խօսուում է «առանց բաւարար հիմնաւորման», այն դէպքում, երբ փոփոգերէնը գրեթէ ծանօթ չէ⁶¹: Ըստ Աճառեանի՝ «հայերը

տեղաշարժը հայերէնում եւ հայերի ծագումնաբանութեան հարցերը), *Вопросы Языкознания*, 1960:5, էջ 38:

⁵⁴ Հայնրիխ Հիբշման, *Հայագիտական ուսումնասիրութիւններ*, ԵՀ հրատ., Երեւան, 2004, էջ 55:

⁵⁵ Հայնրիխ Հիբշման, *Հայերէնի քերականութիւն*, ԵՀ հրատ., Երեւան, 2003, էջ 405. նաեւ՝ Աճառեան, *մաս I*, էջ 130:

⁵⁶ Զահուկեան, *Հայերէնը եւ*, էջ 105:

⁵⁷ В. И. Георгиев, *Исследования по Сравнительно-Историческому Языкознанию* (Պատմահամեմատական լեզուաբանական ուսումնասիրութիւններ), «Արտասահմանեան գրականութեան հրատ., Մոսկուա, 1958, էջ 142-43:

⁵⁸ Георгиев, *Передвижение*, էջ 38:

⁵⁹ Մանանդեան, էջ 23:

⁶⁰ Meillet, *Esquisse*, էջ 11. նոյնի՝ *Les Nouvelles Langues Indo-Européennes Trouvées en Asie Centrale*, Փարիզ, RM, 1912, էջ 7. նաեւ՝ Աճառեան, *մաս I*, էջ 133. նաեւ՝ Ադոնց, էջ 310:

⁶¹ Meillet, *Les Nouvelles*, էջ 7:

թրակո-փոհիգիականից անկախ մի ցեղ են»: Նախքան Փոքր Ասիա անցնելը, հայերը բնակուել են Թրակիայում՝ թրակափոհիգիական միջավայրում, որի ընթացքում հայկական ցեղախմբերի յետսապահ մասերը գուցէ եւ իրացրել են փոհիգների լեզուն, «*բայց բուն առաջընթաց մասը, որ վերջապէս եկել հաստատուել է Հայաստանում, որեւէ կապ չունի նրանց հետ*»⁶²:

4) Հնդեւրոպական «խեթերի» մուտքը փոքրասիական տարածք տեղի է ունեցել աւելի վաղ, քան «ծովային ժողովուրդների» նոյնիսկ առաջին տեղաշարժը (Ք.ա. Բ. հազարամեակի առաջին կէս), ենթադրում է՝ ԺԸ.-ԺԶ. դդ.: Որոշ ժամանակ անց եկուոր «խեթերը» կործանում են բնիկ՝ ոչ-հնդեւրոպացի *խաթերի/հաթերի* պետութիւնը՝ Խաթին (աքադ. *Hatti* կամ *խեթ. Hattusas/Hattušaš*) եւ նրա տեղում հիմնում իրենց թագաւորութիւնը՝ պահպանելով, սակայն, նախորդ պետութեան անուանումը՝ *խաթի*: Վերջինս գոյատեւել է մօտ 200 տարի՝ ԺԴ.-ԺԲ. դդ.: Խաթիի բնիկների լեզուն հ.-ե. խեթերէնից տարբերելու նպատակով լեզուաբանները պայմանականօրէն առաջինը անուանել են *խաթերէն* (Բեդրժիխ Հոզնի) կամ *նախախեթերէն* (Էմիլ Ֆոռէր), իսկ երկրորդին տուել են նաեւ *նեսերէն*՝ Խաթիի Նեսի «հին մշակութային կենտրոնի» անունով, *կամիսերէն*, ինչպէս նաեւ այլ անուանումներ⁶³: Հ.-ե. «խեթերին» վերաբերող այս թռուցիկ ակնարկի պատճառն այն է, որ, ինչպէս արդէն նշեցինք, առանձին գիտնականներ, ինչպէս Պիտէր Ենսէր («Hittiter und Armenier»՝ խեթերը եւ հայերը) եւ Պեդերսընը, հակուած էին հայերի նախնիներ համարելու խեթերին՝ կապ տեսնելով նրանց անուան *h̥t*, *h̥ate*, *hatti*, *hati* տարբերակների եւ *հայ* անուանման միջեւ՝ *t>j* անցումով⁶⁴: Հմմտ. նաեւ. «*Այդ Հայ անունն զմեզ կ'առաջնորդէ ոչ թէ Հայրաց (խաթերի՝ խեթերի - Վ. Պ.) ծաղկման, այլ անոնց անկման ժամանակը*»⁶⁵:

⁶² Աճառեան, *մաս I*, էջ 131:

⁶³ И. М. Дьяконов, *Языки Древней Передней Азии* (Հին Առաջաւոր Ասիայի լեզուները), «Նաուկա», Մոսկուա, 1967, էջ 167. նաեւ՝ Մանանդեան, էջ 18. նաեւ՝ В. В. Иванов, *Хеттский Язык* (խեթերէն), Արեւելեան գրականութեան հրատ., Մոսկուա, 1963, էջ 8-18. նաեւ՝ А. А. Королев, «Хетто-Лувийские Языки», *Языки Азии и Африки* (խեթալուվիական լեզուներ, Ասիայի եւ Ափրիկէի լեզուներ), *հյոր. I*, «Նաուկա», Մոսկուա, 1976, էջ 13-93. նաեւ՝ Զահուկեան, *Հայերէնը եւ*, էջ 124. նաեւ՝ Աճառեան, *մաս I*, էջ 135-49: Ոմանք «նախախեթերէն» անուանումը համարում են «անյաջող», որովհետեւ Խաթիի հին եւ նոր բնակիչների լեզուների, այսինքն՝ *խաթերէնի* եւ *խեթերէնի* (այն է՝ *նեսերէնի*) միջեւ ծագումնաբանական կապ չկայ (Дьяконов, էջ 167. նաեւ՝ Զահուկեան, նոյն):

⁶⁴ Զահուկեան, նոյն, էջ 125: Այս հնչիւնական անցումը դրսեւորւում է *հ.-ե. նախալեզու-հայերէն* ոչ մեծ թուով առնչութիւններում. հմմտ. *māter- > *մայր*, *pəter > *հայր*, *āter > *այրել*, *bhereti > նիսգր. *hj.* [{*berei(i)}/{*բերեյ(h)}] > գրբ. *hj. բերէ* [berē] «(նա) բերում է» եւն.:

⁶⁵ Պեդերսըն, «Հայերէնի դիրքը», էջ 119:

Խեթերին հայերի նախնիներ համարելու դրոյթը վերաբերում է մի ժամանակաշրջանի, երբ, ըստ ամենայնի, խեթերենը տակափն բաւարար չափով ուսումնասիրուած չէր: Չնայած որ դեռեւս 1915-17ին չէիս լեզուաբան Հոռոզին ապացուցել էր խեթերենի (նեսերենի) հնդեւրոպական բնոյթը, բայցեւայնպէս այդ լեզուի առաջին համեմատական քերականութիւնները, որոնք հնարաւորութիւն կը տային տեսնել հ.-ե. ցեղակիցների հետ նրա մերձաւորութեան աստիճանը, գրուած են 1930ականներից յետոյ⁶⁶: Թէպէտեւ դեռեւս նախորդ դարի վերջերին կատարուած հնչոյթային եւ քերականական զուգաբանութիւնների վիճակագրական քննութեամբ ապացուցուել է, որ հայերէնի եւ խեթերէնի ընդհանրութիւններն աւելին չեն, քան այդ ընդհանրութիւնները հայերէնի եւ հնդիրանական լեզուների, հայերէնի եւ յունարէնի, հայերէնի եւ փոիւգերէնի միջեւ⁶⁷, բայցեւայնպէս, առանձին գիտնականներ (օր.՝ Ֆելիքս ֆոն Լուշանը) նոր ժամանակներում էլ խօսում են հայերի եւ խեթերի նոյնական մարդաբանական տիպի մասին⁶⁸:

5) Ըստ պատմագիտութեան համեմատաբար նոր տուեալների՝ Հայկական Լեռնաշխարհում հայերը պետականօրէն կազմակերպուած ներկայութիւն էին արդէն Ք.ա. Գ. հազարամեակի սկզբներին⁶⁹, որի վկայութիւն է հայկական հնագոյն պետութեան՝ Արատտայի գոյութիւնը 2800-2600ին⁷⁰: Արատտան եղել է Ք.ա. Գ.-Բ. հազարամեակներում փոքրասիական տա-

⁶⁶ Հմմտ.՝ Է. Հ. Ստիւրտեւանտ, *Խեթերէն լեզուի համեմատական քերականութիւն*, (1933). նաեւ՝ Հ. Պեդերսըն, *Խեթերէնը եւ միւս հնդեւրոպական լեզուները* (1938). նոյնի՝ *Լիկիերէնը եւ խեթերէնը* (1945). նաեւ՝ Եո. Ֆրիդրիխ, *Խեթերէն լեզուի համառօտ քերականութիւն* (1940). նաեւ՝ Ֆ. Ջոմէր, *Խեթերը եւ խեթերէն լեզուն* (1947). նաեւ՝ Է. Հ. Ստիւրտեւանտ, Ա. Հան, *Խեթերէն լեզուի համառօտ քերականութիւն* (1951). նաեւ՝ Հ. Կրօնասէր, *Խեթերէն լեզուի համեմատական հնչիւնաբանութիւն եւ ձեւաբանութիւն* (1956) (Георгиев, *Исследования*, էջ 11-12):

⁶⁷ Джаукян, *Сравнительная грамматика*, էջ 204-5: Հմմտ. նաեւ՝ «Կամիսերէնը (հ.-ե. խեթերէնը - Վ.Պ.) նման է հայերէնին այն չափով, որ չափով նման է որեւէ հնդեւրոպական լեզու» (Աճառեան, *մաս I*, էջ 148):

⁶⁸ Եոյրի Գաբրիէլեան, «Հայերի եւ հայերէնի ծագման խնդիրներն ըստ լեզուաբանական եւ գենետիկական տուեալների», *Բանբեր Երեւանի Համալսարանի. հայագիտութիւն*, 2017:1, էջ 12:

⁶⁹ Ադոնցը, որը, յիշատի, Հայաստանի հնագոյն շրջանի քաղաքական պատմութեան խոշորագոյն ուսումնասիրողներից է, այդ պատմութիւնն սկսում է Ք.ա. ԺԴ. դարով՝ ընդունելով, որ իր ժամանակներում պատմագիտութեան «լոյսը» դեռեւս չէր թափանցել դրան նախորդող շրջանի պատմութեան մէջ (Ադոնց, էջ 24): Բայց, որ աւելի կարեւոր է, այսօր մարգարէական են հնչում նրա խօսքերն այն մասին, որ «Հոռն իր ընդերքում դեռեւս շատ անակնկալներ է թաքցնում», որոնց բացայայտումը նոր լոյս կը սփռի այդ պատմութեան վրայ (էջ 9):

⁷⁰ Արտակ Մովսիսեան, *Հնագոյն պետութիւնը Հայաստանում. Արարիկ, ՀՀՅԴ, Երեւան, 1992. նոյնի՝ Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամեակում, ԵՀ հրատ., Երեւան, 2005, էջ 16-29:*

րաճքում ձեւատրուած խոշոր երկրներից մէկը, իսկ այդպիսի պետութիւն կազմաւորելու համար այն ստեղծող ժողովուրդը պիտի անցնէր ինքնակազմակերպման բաւականին երկար ճանապարհ⁷¹: Հետեւաբար, հայ էթնիկական տարրը Հայկական Բարձրաւանդակում ներկայութիւն է եղել աւելի վաղ, առնուազն՝ Դ. հազարամեակի վերջերից: Իսկ հնդեւրոպական նախահայրենիքի տեղադրութեան առաջաւորասիական վարկածն ընդունելու դէպքում այդ ժամանակը կարող է աւելի առաջ տարուել, հնարաւոր է՝ Ք.ա. Ե. հազարամեակի վերջ-Դ.ի սկիզբ, այսինքն՝ մեզանից շուրջ 6-7000 տարի առաջ⁷²: Մօտաւորապէս նման ժամանակագրութիւն են առաջարկել նաեւ Գէորգիեւը եւ Զահուկեանը⁷³: Հ.-Ե. լեզուների՝ հիմք-լեզուից առանձնանալու եւ զարգացման ինքնուրոյն ճանապարհ բռնելու ժամանակագրութեան մասին այդպիսի արդիւնքի էր հասել նաեւ լեզուաբան Մորիս Սվոդեշը՝ իր մշակած լեզուամիջնակագրական մեթոդի կիրառումով⁷⁴:

⁷¹ Ճիշտ է, հին աշխարհում եղել են նաեւ պետականութեան ըմբռնումից զուրկ ժողովուրդներ, աւելի ճիշտ՝ ստուարաթիւ ցեղախմբեր, ինչպիսիք էին, օրինակ, հիքսոսները, հոները եւ սկիւթները, որոնք հեղեղի նման խուժել են այս կամ այն տարածք եւ կործանել պետականօրէն կազմակերպուած երկրներ, բայց այդ ցեղերը, որպէս կանոն, երկար գոյութիւն չեն ունեցել, անհետ լքել են պատմութեան թատերաբեմը՝ ծուլուելով այլ ժողովուրդների մէջ: Յաճախ նրանք իրենց հետ տարել են նաեւ աւելի լաւ կազմակերպուած եւ բարձր մշակոյթ ունեցող ժողովուրդների, ինչպիսիք էին, օր., հ.-Ե. խեթերը (կամիսները), փոհիզները եւ պոնտոսցիները:

⁷² Գամկրելիձէն եւ Վիաչեսլաւ Իւանովն ընդհանուրհնդեւրոպական լեզուի տրոհման նախօրեակին՝ Ք.ա. Դ. հազարամեակում, «հնդեւրոպական նախալեզուի նախասկզբնական տարածման մարզը», այն է՝ հ.-Ե. նախահայրենիքը, տեղակայում են Բալկաններից մինչեւ Թուրքմէնստան ընկած տարածքում՝ ներառեալ հարաւային Կովկասն ու Իրանական հարթավայրը (Гамкрелидзе, Иванов, *Индоевропейский язык, кн. II*, Թբիլիսի, 1984, էջ 865-70):

⁷³ В. Георгиев, “Проблема возникновения индоевропейских языков” (Հնդեւրոպական լեզուների առաջացման հիմնահարցը), *Вопросы языкознания*, 1956:1, էջ 677. նաեւ՝ Джаукян, *Очерки*, էջ 325-26: Հմմտ. նաեւ՝ Եւրի Գաբրիէլեան, *Լեզու, լեզուներ եւ ժողովուրդներ*, ԵՀ հրատ., Երեւան, 2019, էջ 9:

⁷⁴ Морис Сводеш, “Лексикостатическое датирование доисторических этнических контактов (На материале племен эскимосов и североамериканских индейцев)” (Նախապատմական էթնիկական շփումների բառամիջնակագրական թուագրումը ստ էսկիմոսների եւ հիւսիսամերիկեան ցեղերի նիւթի), *Новое в лингвистике* (Նորը լեզուաբանութեան մէջ), *սրակ. I*, «Պրոգրէս», 1960, էջ 23-52. նոյնի՝ “К вопросу о повышении точности в лексикостатическом датировании” (Բառամիջնակագրական թուագրման մէջ ճշգրտութիւնը բարձրացնելու հարցի շուրջ), *Новое*, էջ 53-87: Հմմտ. նաեւ՝ Гарри Хойер, “Лексикостатистика (Критический обзор)” (Բառամիջնակագրութիւն (Քննադատական տեսութիւն), *Новое*, էջ 88-107:

6) Առայժմ մի կողմ թողնելով «ուրարտերէն» կոչուած լեզուի ծագումնաբանական պատկանելութեան հարցը⁷⁵, նկատենք, որ նախորդ դարի ակադեմիական պատմագիտութեան համաձայն Ք.ա. 2. դարի սկզբին, մօտաւորապէս 590ի սահմանագծին⁷⁶, «Ուրարտոփ» (= Բիայնիլիի)⁷⁷ թագաւորութեան կործանումից յետոյ նրա բնակիչները՝ «ուրարտացիները» (կամ «ալարոդները») ⁷⁸, աստիճանաբար ձուլուեցին կազմաւորուող հայ ժողովրդի մէջ եւ Երուանդունիների թագաւորական հարստութեան ձեւաւորման շրջանում՝ Ք.ա 2.-Դ. դդ., պատմագրութիւնը դադարում է այլեւս նրանց մասին յիշել⁷⁹: Եթէ նկատի առնենք, որ «Ուրարտու»ին նախորդող շուրջ երկհազարամեայ ժամանակաշրջանում հայ ժողովրդի եւ հայկական պետական կազմաւորումների մասին մեր տեղեկութիւնները գերազանցապէս օտար աղբիւրներից են (շումէրական, ասորաբաբելական են), իսկ տեղական ծագման պատկերագրութիւնն էլ չէր կարող լեզուական իւրայատկութիւնների մասին թէկուզ հեռաւոր պատկերացում տալ,- ապա «ուրարտերէնը», ըստ էութեան, Մեծ Հայքի տարածքում խօսուած եւ մեզ յայտնի ամէնից հին լեզուն է (կամ լեզուավիճակը): Այդ տեսանկիւնից մասնակի բացառութիւն է *հայասերէնը*՝ Հայասա-Ազգիւմ գործածուած լեզուն, սակայն՝ 1) վերջինիս բնոյթի մասին (հայերէն է, թե՞ ոչ), ինչպէս արդէն նշել ենք, նոյնպէս միասնական կարծիք չկայ, 2) նրա մասին պատկերացումը ձեւաւորում է միայն անձնանունների, դիցանունների եւ տեղանունների քննու-

⁷⁵ Իշխանեանը, հաւանաբար նկատի ունենալով, որ համեմատաբանները խոտիերէնի հետ միասին «ուրարտերէնը» համարում են փոքրասիական ծագման առանձին լեզուաընտանիք՝ *խուռաուրարական* (Ղափանցեան, *Հայոց լեզուի*, էջ 102-46. նաեւ՝ Զահովեան, *Հայոց լեզուի*, էջ 417-422), «ուրարտերէնին» տալիս է «մերձխոտիերէն կամ նորխոտիերէն» պայմանական անուանումը (Իշխանեան, *Հայ ժողովրդի ծագման*, էջ 57, նոյնի՝ *Բնիկ հայերէն բառեր եւ հնագոյն*, 42-61, նոյնի՝ *Պարկերազարդ պատմութիւն*, էջ 43): Սակայն հազիւ թէ կարելի է այդ բնորոշումները յաջողուած համարել, յատկապէս՝ երկրորդը, որով, ըստ էութեան, «ուրարտերէնը» դիտւում է խոտիերէնի յետագայ փոփոխից մէկը, որ նոյնն է, թէ՛ խոտիերէն, որի համար հիմքեր չկան:

⁷⁶ Ադոնց, էջ 284. նաեւ՝ Ն. Վ. Յարութիւնեան, «Ուրարտուն մ.թ.ա. VIII դարի վերջին եւ VII դարում»՝ *Հայ ժողովրդի պատմութիւն, հյոր. I*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1971, էջ 336-37. նաեւ՝ Առաքելեան, էջ 32:

⁷⁷ Հմմտ.՝ *Bi-a-i-ni* - [*V(i)ṣinə-?] հյ. *Van* (Дьяконов, էջ 126):

⁷⁸ Աճառեանը, ըստ ամէնայնի՝ Քսենոփոնի հետեւողութեամբ, բիայնացիներին անուանում է *խալդեր*, *խալդեաններ*, որի համար հիմք է ընդունուել նրանց խալդ աստծոյ անունը (Աճառեան, *մաս I*, էջ 150):

⁷⁹ Ադոնց, էջ 305. նաեւ՝ Ս. Տ. Երեմեան, «Հայ ժողովրդի կազմաւորման աւարտը եւ հայկական առաջին պետական կազմաւորումները»՝ *Հայ ժողովրդի պատմութիւն, հյոր. I*, էջ 435-43. նաեւ՝ Մովսէսեան, Լովէ, էջ 18:

թեան միջոցով, այսինքն՝ չեն պահպանուել բառապաշարի հասարակ բառեր եւ դրանցով կազմուած նախադասութիւններ կամ արտայայտութիւններ, որոնք կարող էին պատկերացում տալ այդ լեզուի քերականական կառուցուածքի մասին⁸⁰: Ուսումնասիրողները «ուրարտերէն»ում տարբերակում են *z* եւ *z* հալաշփականները, որոնցից իւրաքանչիւրին վերագրում է երկակի հնչիւնական արժէք, համապատասխանաբար՝ [c/=hj. ɖ] եւ [c'/=hj. ɟ] (հմմտ. *Šupa-* ~ /Cɔp^h-(k^h)/ *Ծովի*-(p), *šue* «լիճ» - *ծով*), [j/ζ= hj. ɖ] եւ [j/ζ=hj. ɟ] (հմմտ. ուրարտ. *Alzi-ni* – hj. /Alʒni-(k^h)/ *Աղձնի*-(p), ուրարտ. *Zabaḫa-* – hj. /ʒawax-k^h/ *Ջաւախ*-(p))⁸¹: Չի նաեւ [j] հնչարտաբերութիւնը հնարաւոր է համարել Դիակոնովը, սակայն, ըստ Զահուկեանի, «*բուն ուրարտական բառերում ճ, ջի առկայութիւնը հաւաստիօրէն չի պարզուած*»⁸²: Հնարաւոր է՝ դրանք մէկական հնչոյթներ են՝ երկուական հնչիւնական տարբերակներով (ենթահնչոյթներով), որոնցից իւրաքանչիւրը ժամանակի ընթացքում կարող էր տարանջատուել՝ վերածուելով առանձին հնչոյթի, բայց դա կարող էր նաեւ տեղի չունենալ: Չնայած որ Գէորգի Մելիքիշվիլին, ինչպէս եւ Ղափանցեանը, փոխադարձ կապ են տեսել կովկասեան լեզուների, մասնաւորապէս՝ վրացերէնի հետ «ուրարտերէնի» հնարաւոր մերձաւորութեան, այլ կերպ՝ ծագումնաբանական կապի եւ նրանում հալաշփական հնչոյթների առկայութեան միջեւ⁸³, Ադոնցի կարծիքով, սակայն, «*այդ տեսակէտը մեկնաբանելու ուղղութեամբ թափուած ջանքերը ծանրակշիռ չեն եւ զուրկ են լեզուաբանական հետաքրքրութիւնից*»⁸⁴: Մեր կարծիքով եւս այդպիսի բացատրութիւնը արժէք կ'ունենար, եթէ, ինչպէս նշել ենք, հալաշփականներ չունենային նաեւ հնդեւրոպական, մասնաւորապէս՝ *սապրմ* խմբի հին լեզուները, որոնցից յատկապէս հին հնդկերէնը հարուստ էր այդ հնչոյթներով:

7) Ք.ա. Բ. հազարամեակի Բ. կեսի եւ յատկապէս Ա. հազարամեակի Փոքր Ասիայի քաղաքական պատմութիւնը հարուստ է պետութիւնների ձեւաւորման, դրանցից որոշների (Ասորիք, Ուրարտու (Բիայնա կամ «Բիաինիլի»), Մարաստան, Աքեմէնեան Տէրութիւն, Մակեդոնական Կայսրութիւն,

⁸⁰ Ղափանցեան, *Հայոց լեզուի*, էջ 62-67. նաեւ՝ Զահուկեան, *Հայոց լեզուի*, էջ 322-41:

⁸¹ Дьяконов, էջ 127՝ ներառեալ ծնօթ. 28ը եւ 29ը. նաեւ՝ Джаукян, *Урартский*, էջ 13. նաեւ՝ Զահուկեան, *Հայոց լեզուի*, էջ 430-31: Մելիքիշվիլին եւ Զահուկեանը ուրարտ. շին վերագրում են *z* [= hj. ɟ]ին համարժէք, այսինքն՝ շփական հնչարտաբերութիւն (Меликишвили, *Урартские*, էջ 46, նոյնի՝ *Урартский язык* (Ուրարտերէն), «Նաուկա», Մոսկուա, 1964, էջ 22. նաեւ՝ Զահուկեան, *Հայոց լեզուի*, էջ 430-31): Տին վերագրում է [s] (=hj. ɟ) հնչիւնական արժէք (հմմտ. ուրարտ. *Tušpa* – hj. *Tosp* /= Snuɟ/ (Меликишвили, *Урартский язык*, էջ 22. նաեւ՝ Дьяконов, էջ 126-27), բայց Զահուկեանը նշում է *š*՝ նաեւ hj. շին համարժէք արտաբերութիւն. հմմտ. Anaše-Ալաշկերտ (Զահուկեան, *Հայոց լեզուի*, էջ 430):

⁸² Дьяконов, նոյն. նաեւ՝ Զահուկեան, *Հայոց լեզուի*, էջ 431:

⁸³ Меликишвили, *Урартский язык*, էջ 22:

⁸⁴ Ադոնց, էջ 280:

Սելեկտան Թագաւորութիւն, Հայոց (Տիգրան Մեծի) Տէրութիւն են.) ծաւալապաշտական նկրտումների, ապա նաեւ կործանման դրսեւորումներով: Շուրջ մէկ հազարամեակ տեւած այդ ամբողջ ընթացքում, բնականաբար, տեղի են ունեցել ժողովուրդների, հետեւաբար՝ նաեւ լեզուների սերտ փոխշփումներ: Նշուած գործընթացների կիզակէտում եղել է նաեւ Հայկական Լեռնաշխարհը, որտեղ, ինչպէս եւ նրա անմիջական հարեւանութեամբ երբեմնի բնակուած ժողովուրդներից շատերը (խեթեր, փոիզացիներ, պոնտոսցիներ, կապադովկիացիներ, կիմէրներ, խալիբներ, սայսաէրներ, մարեր, լիդիացիներ են), նախ՝ կորցնում են ինքնիշխանութիւնը, ապա իրենք էլ աստիճանաբար լքում են պատմութեան թատերաբեմը՝ ծուլուելով այլ ժողովուրդների, այդ թում՝ հայերի մէջ: Նրանց մի մասը, դեռեւս Ք.ա. Թ.-Է. դդ. յայտնուելով դէպի Մեծ Հայքի ընդգրկման սահմանները ձգտող «Բիւսինիլի» (Ուրարտու) պետութեան կազմում, ըստ ամէնայնի, ծուլուեցին բիւսինացիների (ուրարտացիների) հետ, որքանով որ Բիւսինայի (իմա՝ Վանի կամ Արարատեան Թագաւորութեան) բնակիչները, ըստ էութեան, եղան այն միջուկը, որի շուրջ ծաւալուեց հայ ժողովրդի կազմաւորումը: Այն, որ «ուրարտացիները» ինչպէս մշակութաբանական, մարդաբանական տիպի (**արմենոիդ**), այնպէս էլ պատմագիտական տեսանկիւնից հայեր են, վաղուց կասկածներ չի յարուցում⁸⁵: Միայն այն փաստը, որ Դարեհ Ա.ի՝ Բեհիսթունի ժայռին փորագրուած եռալեզու (էլամերէն, հին պարսկերէն եւ ասորաբաբելոնեան⁸⁶) արձանագրութեան մէջ Աքեմէնեան Տէրութեան յիշա-

⁸⁵ Շահինեան, էջ 37: Հմմտ. նաեւ՝ Պ. Մ. Епископосян, *Генетика ростовых процессов в армянской популяции* (Աճման գործընթացների ծագումնաբանութիւնը հայկական տեսակի մէջ), ՀՀ ԳԱԱ հրատ., Երեւան, 2000. նաեւ՝ Ն. Քոչար, «Արմենոիդ. ռասայական տիպի ծագումնաբանական խնդիրները Հայկական Լեռնաշխարհում եւ յարակից տարածքներում», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 2012:1, էջ 287-300. նաեւ՝ Գաբրիէլեան, «Հայերի ու հայերէնի ծագման խնդիրներն», էջ 3-13: Իշխանեանը միմեանցից տարանջատում է «ուրարտացիների» էթնիկական պատկանելութեան եւ «ուրարտական» արձանագրութիւնների լեզուի հարցերը, ըստ այդմ՝ «ուրարտացիներին» համարելով հայեր, իսկ արձանագրութիւնների լեզուն ոչ հայկական, ինչպէս արդէն նշել ենք՝ «նոր խոտիերէն» (հմմտ. օր.՝ Իշխանեան, *Հայ ժողովրդի ծագման*, էջ 53-54): Վարկածի առաջին մասը ունի հաւանականութիւն, եթէ նկատի առնենք, որ հին աշխարհում օտար գրից եւ լեզուից օգտուելն ընդունուած էր: Ինչ վերաբերում է երկրորդ մասին, որ այն հայերէն չէր, վիճելի է: Այդ հարցի լուծումը յատկապէս Զահուկեանի «Ուրարտական արձանագրութիւններ»ի հրապարկումից յետոյ պիտի թողնել ապագային:

⁸⁶ Եղել է աքադերէնի երկու բարբառներից մէկը, ուստի յաճախ անուանում են հենց *աքադերէն*:

տակուած 23 «մարգերից» Հայաստանի, հին պարսկերէնով *Armina/Armīniah*⁸⁷ (մեր երկիրը դեռ հին ժամանակներից *Արմինա/Արմինիա*, ժողովրդին՝ *արմէներ* են անուանել պարսիկները, յոյները եւ առհասարակ օտարները, բացառութեամբ վրացիների, որոնք Հայաստանը անուանում են *Սոմխեթի*, իսկ հայերէնին՝ *սոմէխի*) ասուրաբաբելերէն համարժէքը *Urartu/Uraštun* է,- կարծում ենք՝ կասկածից վեր պիտի համարել նաեւ Ուրարտուի՝ հայկական պետութիւն լինելը: Բեհիսթունի արձանագրութեան մէջ յիշատակուող Արմինան գտնւում էր Հայկական Լեռնաշխարհում՝ «Վանայ եւ Սեանայ լճերի շրջանում»⁸⁸: Մինչեւ օրս էլ, սակայն, խնդրայարոյց է մնում «ուրարտական» արձանագրութիւնների լեզուի կամ այսպէս կոչուած «ուրարտերէնի» ծագումնաբանական առնչութիւնների հարցը: Այդ ուղղութեամբ կատարուած ուսումնասիրութիւնները հեղինակներին բերել են տարբեր, երբեմն՝ տրամագծօրէն հակադիր եզրայանգումների: Քանի որ այդ խնդրի հանգամանալից արծարծումն այստեղ մեր անմիջական նպատակներից դուրս է, կը յիշատակենք միայն երկու դրոյթ, որոնք, մեր կարծիքով, ուղեցուցային նշանակութիւն են ունեցել «ուրարտագիտութեան» առնուազն վերջին յիսնամեայ շրջափուլում: Դրանք են.- 1) հիմքեր կան խօսելու «ուրարտերէնի» եւ խուդիերէնի մերձաւոր ցեղակցութեան, ըստ այդմ՝ *խուդի-ուրարտական լեզուաընդհանրի* տարբերակման մասին⁸⁹, 2) խուդի-ուրարտական լեզուներն ունեցել են «ասիանիկ» ծագում եւ նոստրատիկ առնչութիւններ են ի յայտ բերում նախահնդեւրոպական լեզուի հետ⁹⁰: Ընդ որում, հ.-ե. լեզուների, այդ թւում՝ հայերէնի հետ աւելի մեծաթիւ եւ կանուր են յատկապէս «ուրարտերէնի» առնչութիւնները, այլ ոչ թե՛ խուդիերէնի⁹¹: «Ուրարտերէն»-հայերէն առնչութիւնների կապակցութեամբ պիտի նկատի ունենալ հետեւեալը.- ա) մեզ յայտնի է «ուրարտերէնի» բառապաշարի մի

⁸⁷ Գ. Ա. Տիրացեան, «Հայաստանը Աքեմէնեան Պարսկաստանի տիրապետութեան ներքոյ»՝ *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտր. I, էջ 452. նաեւ՝ Զահուկեան, *Հայոց լեզուի պատմութիւն*, էջ 427. նոյնի՝ «Ուրարտերէնը եւ հայերէնը»՝ Առաքելեան, Զահուկեան, Սարգսեան, էջ 162-67 (մեր կարծիքով, *Urartu/Uraštun*՝ Զահուկեանի այստեղ ներկայացուող ստուգաբանութիւնը արժանի է յատուկ ուշադրութեան). նաեւ՝ Գ. Խ. Սարգսեան, «Ուրարտական Տէրութիւնը եւ հայերը»՝ նոյն տեղում, էջ 71. նաեւ՝ Իշխանեան, *Հայ ժողովրդի ծագման*, էջ 68-71, նոյնի՝ *Պարկերազարդ պատմութիւն*, էջ 41. նաեւ՝ Մութաֆեան, Լովէ, էջ 20:

⁸⁸ И. М. Оранский, *Введение в иранскую филологию* (Իրանական բանասիրութեան ներածութիւն), «Նաուկա», Մոսկուա, 1988, էջ 124-28:

⁸⁹ Меликишвили, *Урартские клинообразные надписи*, էջ 89-92. նաեւ՝ Ղափանցեան, *Ուրարտուի*, էջ 33-34. նոյնի՝ *Հայոց լեզուի պատմութիւն*, էջ 103. նաեւ՝ Дьяконов, էջ 113-65. նաեւ՝ Զահուկեան, *Հայոց լեզուի*, էջ 417-18:

⁹⁰ Զահուկեան, *Հայոց լեզուի*, էջ 421-22:

⁹¹ Джаукян, *Урартский*, էջ 146-47. նոյնի՝ *Հայոց լեզուի*, էջ 421-22:

փոքր մասը միայն (շուրջ 350 բառ եւ արմատ⁹²), որը չի կարող ամբողջական պատկերացում տալ ոչ միայն այդ լեզուի քերականական կառուցուածքի, այլեւ հնչոյթային կազմի վերաբերեալ, բ) *հ.-ե. նախալեզու-ուրարտերէն* հնչոյթային առնչութիւններում առկայ են *հ.-ե. նախալեզու-հայերէն* հնչոյթային համապատասխանութիւններին բնորոշ դրսեւորումներ, մասնաւորապէս՝ դիտարկուած է հպական բաղաձայնների տեղաշարժ (ըստ աւանդական մեկնաբանութեան)⁹³, գ) կան զգալի թուով քերականական ընդհանրութիւններ, որոնք չեն կարող բացատրուել փոխառութեան երեւոյթով (*հ.-ե. ձայնդարձին*, բնաւոր հիմքով՝ *ե/օ*, հոլովմանը բնորոշ դրսեւորումներ, *էրգալրիփ*՝ *-še* վերջատրութիւն [հմմտ. ուրարտ. *arše* «երեխայ, պատանի», ուրարտ. *ardiše* «ուժ, իշխանութիւն», ուրարտ. *baušē* «բառ, հրաման» են], որը համապատասխանում է *հ.-ե. անուանականի -s*⁹⁴ վերջին են.)⁹⁵, դ) դիտարկուել են ինչպէս հայերէնի, այնպէս էլ առհասարակ *հ.-ե. լեզուների* հետ բառապաշարային զգալի թուով ընդհանրութիւններ (հմմտ. ուրարտ. *armuzi* «ընտանիք (?)» (< *հ.-ե. *or-m- / *er-mo-*). հմմտ. *hj. արմ* «արմատ», *արմատ* «արմատ, ցեղ, սերունդ», *գ-արմ* «ցեղ, սերունդ», - ուրարտ. *baušē* «բառ, հրաման. իր, առարկայ» (<*հ.-ե. *bhā-u-*). *հն. հնդկ. bhānati* «ասում է», *hj. բան* «բառ, խոսք. իր առարկա», *հուն. φημί* (դոր. *φῆμι*) «ասել», *հն. վրն գրմ. ban* «հրաման», *լիտ. bau~ma* «լսողութիւն, խօսակցութիւն, լուրեր, յերիւանք», - ուրարտ. *gunušē* «ճակատամարտ, կռիւ, ընդհարում» (*gunušini* «զինուորական, մարտական») (< *հ.-ե. *gʰono-s-*). հմմտ. *հուն. φόνος* «սպանութիւն», *φονή* «սպանութիւն, կոտորած», *հն սաքս. guðr, gunnr* «ճակատամարտ, մարտ, կռիւ», *hj. գան* (< *հ.-ե. *gʰən-*) «ծեծ, գանահարութիւն» են.⁹⁶ Մեր հաշումներով Զահուկեանի *Ուրարտերէնը ... գրքում* «ուրարտերէն *հ.-ե. լեզուներ*» համապատասխանութիւնները կազմում են շուրջ 214 բառ եւ արմատ, որոնց մօտ 20%-ը (44 բառ) ունեն հայերէն համապատասխաններ: «Ուրարտերէն»-հայերէն համապատասխանութիւնների թիւը կ'աճի, եթէ նշումներին աւելացնենք նաեւ՝ 1) *baba* «լեռ» - *բաբայ* «բլուր», 2) *burgana* «բերդ, ամրոց» - *բուրգն*, 3) *ḫarḫar-š-* «քանդել, ւերել» - *խարխար-եմ* «քանդել, խարխլել», 4) *šani* «աման» (*աքադ. šannum* «կաթսայ» < շումեր.)-

⁹² Իշխանեան, *Բնիկ հայերէն բառեր*, էջ 42:

⁹³ Джаукян, *Урартский*, էջ 141-42:

⁹⁴ Կայ տեսակէտ, որ նախահնդեւրոպական փուլում *հ.-ե. գոյականը* եզակի եւ յոգնակի թուերում ունեցել է միեւնոյն **-es* վերջատրութիւնը, որը աւելի ուշ «անշեշտ դիրքում ընկել է» (А. Н. Савченко, *Сравнительная грамматика индоевропейских языков* (Հնդեւրոպական լեզուների համեմատական քերականութիւն), «Բարձրագոյն դպրոց», Մոսկուա, 1974, էջ 16): Հետեւաբար, բացառուած չէ, որ ուրարտ. *էրգալրիփ*՝ *-še* ծագումնաբանական կապ ունենայ *հ.-ե. անուանականի * -se*ի հետ:

⁹⁵ Джаукян, *Урартский*, էջ 47-86, 142-43:

⁹⁶ Նոյն, էջ 94-124:

սան, -ի «կաթսայ», 5) ԷԵ-ԵԵ «մեծ» («շատ» ?) – հյ. *տէ, տի- (տի-եզերք, տի-կին, տի-այր > տէր բառերում), 6) սլէս(ni) «ուտ» – (սլէ >) ուղտ, -ու, 7) garini «բերդ, ամրոց» (որտեղից էլ՝ Giarniani – Գառնի բառերը)⁹⁷: Միւս կողմից՝ դեռեւս ստուգաբանուած չէ հայերէնի շուրջ 2500 բառ եւ արմատ⁹⁸, եւ չի բացառում, որ դրանց մէջ կարող են զգալի թիւ կազմել հենց ուրարտական ենթաշերտի բառերը (Աճառեանի կանխատեսումով՝ մօտ 1000 բառ⁹⁹): Կարծում ենք՝ վերոշարադրեալը հիմք է տալիս ասելու, որ հայոց լեզուի կազմաւորման հարցում «ուրարտերէնի» նշանակութիւնը ուղիղ համեմատական է հայ ժողովրդի կազմաւորման գործում «ուրարտացիների» ունեցած դերին: Այսինքն՝ հայերէնի կազմաւորման մէջ «ուրարտական» բաղադրիչի դերն ասելի մեծ է եղել, քան մեզ յայտնի է ըստ պահպանուած լեզուական նիւթի: Այն, որ պահպանուած լեզուական նիւթը ոչ-միանշանակ մեկնաբանութիւնների տեղիք է տալիս, կարծում ենք, բուն նիւթի աղքատութիւնից բացի, պայմանաւորուած է նաեւ հետեւեալ հանգամանքներով. ա) «ուրարտերէնը» միատարր չի եղել. նրա կազմում տարբերակուել է առնուազն երկու խօսուածք՝ *վանեան* եւ *մուսասիրեան*¹⁰⁰, բ) Նայիրի ցեղամիութիւնների մեծ մասը, եթէ ոչ՝ բոլորը, եղել են հայկական: Սրանք մի քանի հարիրամեակ՝ մինչեւ Ուրարտուի կազմում ընդգրկուելը Ք.ա. Ը. դ., գոյութիւն են ունեցել տարանջատ կերպով: Այս հանգամանքը՝ նրանց շրջապատող օտարալեզու (հնդեւրոպական եւ ոչ-հնդեւրոպական) ցեղերի եւ ժողովուրդների հետ մշտական շփումների պայմաններում, օր. ասուրերէնի հետ (Ասորեստանի թագաւորները յաճախ են արշաւանքներ ձեռնարկել դէպի Նայիրի երկրները, ապա նաեւ՝ դէպի Ուրարտու)¹⁰¹, կարող էր լրացուցիչ կերպով խթանել կենտրոնախոյս լեզուական միտումները, այն է՝ բարբառային տարբերութիւնների խորացումը: Պիտի կարծել, որ հայոց լեզուն մեզ յայտնի հինհայերէնեան (գրաբարեան) տեսքը սկսում է ստանալ Երուանդեանների եւ յատկապէս Արտաշեսեանների Հարստութեան շրջանում, որը, սակայն, չի նշանակում, թէ այդ փուլում ձեւաւորուող հայերէնը եղել է համայն հայութեան միասնական խօսակցական լեզուն: Առաւել եւս այդպիսին չի եղել նախաարտաշեսեան շրջանի հայերէնը:

Ըստ ամէնայնի, Բիայնայի բնակիչների լեզուն նոյնպէս եղել է Նայիրի ցեղամիութիւններից մէկի խօսակցական հայերէնը, որը, ամէնայն հաւանականութեամբ, այդ պետութեան գոյութեան շրջանում՝ Ք.ա. Թ.-Հ. դդ., բարձրացել է պետական լեզուի կարգավիճակի:

⁹⁷ Զահուկեան, «Ուրարտերէնը», էջ 141-42. նոյնի՝ Հայոց լեզուի ... , էջ 430-32:

⁹⁸ Զահուկեան, *Հրոյցներ հայոց լեզուի մասին*, «Զանգակ», Երեւան, 1992, էջ 64:

⁹⁹ Աճառեան, *Լիակապար*, էջ 753:

¹⁰⁰ Меликишвили, *Урартский Язык*, էջ 7. նաեւ՝ Дьяконов, էջ 117:

¹⁰¹ Աղոնց, էջ 67-286. նաեւ՝ Ղափանցեան, *Ուրարտուի*, էջ 123-228. նաեւ՝ Меликишвили, *Урартские*, էջ 7-24. նաեւ՝ Հայ ժողովրդի պատմութիւն, Հտր. I, էջ 279-338:

8) Բնականաբար, այստեղ ներկայացուած հայեցակարգը, որի հիմքում հ.-ե. նախահայրենքի առաջատրասիական վարկածն է, տեղ չի թողնում հայերի նախնիներին՝ ի դէմս *արմէնների*, «ծովային ժողովուրդների» կազմում Բալկաններից բերելու եւ դրանով պայմանաւորուած՝ յօգուտ այդ վարկածի հին աշխարհի պատմիչների մօտ հիմնաւորումներ փնտռելու փորձերի համար: Մանաւանդ, որ՝ ա) հայկական առաջին պետութեան՝ Արատտայի մասին յիշատակումները գրեթէ մէկուկէս հազարամեակով կանխում են «ծովային ժողովուրդների» ներգաղթը փոքրասիական տարածք, բ) «ծովային ժողովուրդների» կազմում *արմէնների* մասին ուղղակի յիշատակում չկայ. այդպիսի առաջին յիշատակումը կամ դրանցից մէկը վերաբերում է Ք.ա. 480ին Յունաստան արշաւող պարսից Քսերքսէս արքայի զօրաբանակում *արմէնների* ներկայութեանը¹⁰²: Այսինքն՝ փոքրասիական տարածք «ծովային ժողովուրդների» ներթափանցման ժամանակից 7-8 դար յետոյ, երբ Մեծ Հայքում հաստատուել էր Երուանդեանների գերիշխանութիւնը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Վերոշարադրեալը հիմք է տալիս անելու հետեւեալ եզրայանգումները.-

Ա) Հպաշփականների առկայութիւնը հնդեւրոպական հին, յատկապէս՝ *սապըմ* (արեւելեան) խմբի լեզուներում վկայում է, որ դրանց ծագումը հնդեւրոպական երեւոյթ է, հետեաբար հայերէնում հպաշփական հնչոյթների առկայութեան հարցը պիտի քննել հնդեւրոպական, մասնաւորապէս՝ *սապըմ* խմբի լեզուներում դրանց առկայութեան համատեքստում:

Բ) Կովկասեան լեզուներից հայերէնի կատարած փոխառութիւններում հպաշփականների արտացոլումը նոյնական հնչոյթներով վկայում է այն մասին, որ հպաշփականների համակարգը հայերէնում ձեւատրուած էր նախքան փոխառութիւնները: Եթէ նկատի ունենանք, որ Ե. դարում թէ՛ հայերէնում եւ թէ՛ վրացերէնում այդ համակարգերն արդէն իրողութիւն էին, իսկ այդպիսի ամբողջական համակարգը չէր կարող ձեւատրուել նոյնիսկ միջանի հարիրամեակի ընթացքում, ուրեմն կովկասեան լեզուներից հայերէնի կատարած փոխառութիւնները քրիստոնէական առաջին դարերին վերագրելու դէպքում անգամ հայերէնի հպաշփականների համակարգը ձեւատրուած պիտի լինէր դրանից շատ աւելի առաջ:

Գ) Չպէտք է բացառել, որ ծագումնաբանօրէն տարբեր երկու՝ հնդեւրոպական եւ իբերակովկասեան լեզուներում հպաշփական հնչոյթների առաջացման նախադրեալները եղել են դեռեւս այդ լեզուաընտանիքների նախալեզուներում՝ որպէս ժառանգութիւն նոստրատիկ դրութիւնից (Ք.ա. Է.-Ձ. հազարամեակներ): Արեւմտեան խմբի հ.-ե. հին լեզուներում հպաշփականների վատ ներկայացուածութիւնը կարող է լինել այդ լեզուները կրող

¹⁰² Հերոդոտոս, էջ 409. նաեւ՝ Գ. Ա. Տիրացեան, «Հայաստանը Աքեմէնեան», էջ 452:

ժողովուրդների (ցեղախմբերի) կողմից առաջադրասիական նախահայրենիքը համեմատաբար ուշ, քան արեւմտեան միա լեզուները կրող ժողովուրդները (ցեղախմբերը), քելու արդիւնք, բայց աւելի վաղ, քան այդ հնչոյթները գրաւոր շրջանից յայտնի ձեւաւորմանը կը հասնէին արեւելեան խմբի լեզուներում: Յոյների եւ հնաբալկանեան միա ժողովուրդների (փոհագացիներ, թրակացիներ եւն.) դէպի Եւրոպա գաղթը, ըստ ամէնայնի, տեղի է ունեցել ոչ ուշ քան Ք.ա. Գ. հազարամեակի վերջ-Բ.ի առաջին կէսն ընկած ժամանակաշրջանում: Կարելի է ենթադրել, որ ալբանական բարբառը (վաղնջագոյն ալբաներէնը) կրողների գաղթը նախահայրենիքից տեղի է ունեցել հնաբալկանեան ժողովուրդների հետ միաժամանակ, երբ հպաշփականների առաջացման գործընթացն արդէն սկսուած էր: Նրանք իրենց ներկայիս եւրոպական հայրենիք են տեղաշարժուել փոքրասիական տարածքով՝ Սեւ Ծովի հարաւային շրջաններով:

Հնարաւոր է, արեւելեան խմբի հ.-ե. լեզուներում հպաշփականների առաջացման համար նպաստաւոր ենթահող են եղել հնասիական լեզուների հետ շփումները:

Դ) Նկատի ունենալով այն աղքատիկ եւ միակողմանի բառամթերքը, որ բովանդակում է «ուրարտական» արձանագրութիւնների լեզուն, հազիւ թէ հիմքեր կան պնդելու, որ այդ լեզուի հնչոյթային կազմը մեզ յայտնի է ամբողջութեամբ: «Ուրարտական» արձանագրութիւնները կարող են միայն վկայել, որ Ք.ա. Ա. հազարամեակի կէսերին «ուրարտերէն» կոչուած լեզւում կային հպաշփականների որոշ ներկայացուցիչներ, որոնք ունէր նաեւ հայերէնը: Լինելով իւրայատուկ բնոյթի հնչոյթներ՝ ծագումնաբանական բնոյթի այլ առնչութիւնների ենթահողում հպաշփականները եւա կարող են դիտարկուել որպէս հայոց լեզուի հետ «ուրարտերէնի» մերձաւոր առնչութիւնների արտայայտութիւններ այն առումով, որ լեզուական ընդհանրութիւնների այն ամբողջութիւնը, որը երեւան է հանում «ուրարտական» արձանագրութիւնների լեզուն հայերէնի հետ, չի դրսեւորում տարածաշրջանի ինչպէս հնդեւրոպական, այնպէս էլ ոչ հնդեւրոպական որեւէ լեզուի հետ, այդ թւում՝ վրացերէնի:

ON THE “CAUCASIAN” VERSION OF THE ORIGIN OF OLD ARMENIAN AFFRICATES

(historical-linguistic examination)

(Summary)

VARDAN Z. PETROSYAN (vz.petrosyan@ysu.am)

Owing to the fact that there is some correspondence between the system of Old Armenian and Old Georgian affricates, i.e. voiced, voiceless and aspirated voiceless phonemic categories in two rows - voiced (δ/∂ -[j], ϱ/χ -[j]), voiceless (δ/f -[c], δ/f -[č]) and aspirated voiceless (g/g -[c'], ϱ/h -[č']), distinguished linguists Heinrich Hübschmann, Antoine Meillet, and Grigor Ghapantsyan believed that Armenian affricates could have emerged under the influence of the Caucasian languages and particularly that of Old Georgian. Both H. Pederson and Gevorg Jahukyan, however, refuted this hypothesis and considered the Armenian affricates a phenomenon of Indo-European origin.

The author argues that there are no solid grounds to explain the origin of the Armenian affricates by the impact of the Caucasian substratum since, apart from Old Armenian, affricates were present in other old satem languages of not only South-Western Asia (Old Indian, Old Iranian languages) but also of the European region (Old Slavic, Lithuanian, Albanian). Old Indian, in particular, abounds in affricates. Obviously, the affricates in all these languages could not have developed under the influence of the Caucasian languages, especially with no clear evidence about any communication between Old Indian and Caucasian languages in, for instance, the pre-historical period.

Accordingly, the author stresses that, if the Indo-European nature of the Armenian language is acknowledged (and this is an irrefutable fact), the origin of the Armenian affricates ought to be viewed in the context of the origin of the similar phonemes of the Indo-European languages mentioned. It should be acknowledged that the preconditions for the emergence of the affricates existed already in the period of the Indo-European-Kartvelian- ... nostratic state and, hence, in Indo-European language, in general. One of the reasons was the presence of the favorable linguistic environment necessary for the emergence of these phonemes in the region. As far as Armenian is concerned, such conditions could be, for example, the existence of affricates in the Urartian language (comp. [c/=hj. δ], [c'/=hj. g], [j/ζ= hj. δ], [j/=hj. ρ]). Apparently, the language of the Urartian records does not provide a full and comprehensive picture of the phonemic system of the language. However, the existence of several affricates in that language can be viewed as evidence of a closer connection of the Urartian language with Armenian rather than any other Indo-European or non-Indo-European language.

